№ 148 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 9 ՅՈՒԼԻՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 9 ՅՈՒԼԻՍԻ № 148

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետեւեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Այսօր առաւօտեան ժամի 10-ից Խօջիվանքի հանգստարանի եկեղեցում տեղի կունենայ

ՎՈՒՐԳ ԱՒԵՏԻՔԵԱՆ
ԵԶԵԿԵԱՆԻ

հանգստեան կարգը և թաղումը նոյն հանգստարանում, որի մասին ծնողք, քոյր և ազգականներ յայտնում են բարեկամներին:
688. 1—1

Ղարաբաղի Հ. Հոգ. Թեմ. Դպ. Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար առաջիկայ 1914/15 ուսումն. տարվանից հրաւիրվում են բարձրագոյն կրթութեամբ մասնագէտ ուսուցիչներ՝

ա) Կրօնական առարկաների (աստուածաբան). այս առարկաների դասատուն զուգէ ունենայ նաև 6 ժամ հայոց պատմութիւն, 18—24 դաս:
բ) Հայոց լեզու և գրականութիւն—զուգէ նաև 2 դաս Հայաստանի աշխարհագ.՝ 20—22 դաս:
գ) Ընդհանուր պատմութիւն և գերմաներէն—զուգէ նաև Ռուսաստանի աշխարհագրութիւն 2 դաս, կամ ռուսաց պատմութիւն 4 դաս՝ 18—22 դաս:
դ) Բնագիտութիւն և աշխարհագրութիւն՝ 22 դաս:
ե) Ռուսաց լեզու—զուգէ նաև Ռուսաստանի աշխարհագրութիւն՝ 21—23 դաս:
զ) Մաթեմատիկա՝ 22 դաս:
է) Տեսչի օգնական՝ 18 դասով:
ը) Մի վերակացու, որը կարող է ունենալ նաև ստորին դասարաններում ռուսաց լեզուի դասեր:

1) Բարձրագոյն կրթութիւն ունեցողներին տրվում է 70 ր. դասագին:
2) Գէորգեան հոգևոր ճեմարանի աւարտածներին՝ 55 ր.:
3) Միջնակարգ դպրոց աւարտածներին՝ 45 ր.:

Լեզուների դասատուներն ստանում են գրաւորների համար առանձին վարձատրութիւն—մինչև Գ. դասարանը 20 դասի համար 132 ր., Դ—Զ դաս.՝ 150 ր.:

Իսկ մաթեմատիկայի դասատուն 22 դասի համար ստանում է 132 ր., որպէս գրաւորների վարձատրութիւն:

Դաստիարակութեան համար ուսուցիչներն ստանում են 100 ր. վարձատրութիւն:

Տեսչի օգնականին տրվում է 500 ր.:

Վերակացուին 600 րուբլի:

Խնդիրների հետ ներկայացնել ուսման վկայականներն ու ցուցակ ծառայութեանը այս հասցէով. Шуша, Ректору Карабагской Арм. Духовн. Семинаріи Газару Теръ-Газарянъ.
ատ. 683. 4—2

ԶՈՒԲԱԼՈՎԻ ԱՆՈՒԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ
Հայկական Դրամատիկ Խմբակց. Վարչութիւնը

սրանով յայտնում է, որ չորեքշաբթի, յուլիսի 9-ին, երեկոյեան ժամը 8-ին, ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ դահլիճում նշանակված է Խմբակցութեան պ. պ. անդամների

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ,

որի օրակարգի խնդիրներն են.

1) Ընտրութիւն պատուաւոր անդամների.
2) Զեկուցում Վարչութեան 1913/14 թ. գործունէութեան.
3) Հաշւետուութիւն 1913/14 թ. թատերաշրջանի.
4) Զեկուցում վերստուգիչ յանձնաժողովի.
5) Նախահաշիւ 1914/15 թ. թատերաշրջանի.
6) Կանոնադրութեան մի քանի կէտերի փոփոխումն ու յաւելումն.
7) Ընտրութիւններ՝ ա) Վարչութեան 9 անդամի և 3 փոխ-անդամի և բ) Վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի.
8) Ընթացիկ հարցեր:

Անդամագրութիւնը շարունակվում է մինչև ներկայ յուլիսի 7-ը:
(Հ.) ատ. 678. 2—2

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաբաթեան

Կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ, տեղափոխվելով հանքային ջրերը՝ Պեատիգորսկում և Եսենտուկում մայիսի սկզբից ընդունում է հիւանդներ:

Հասցէն Пятигорскъ, за соборомъ, Елизаветинская ул. д. Архипова.
ատ. (Ե.Հ.Կ.) 458. 25—22



ՑԻՐԿ
Ֆ. ԻՊԱՏՕՎԻ

Այսօր, չորեքշաբթի, յուլիսի 9-ին կը տրվի հանդիսաւոր ներկայացում բաղկացած 3 բաժանմունքից, մասնակցութեամբ ցիրկի ամենալաւ արտիստների: 16-րդ օր միջազգային ֆրանսիական ըմբշամարտի: Այսօր կըմբշամարտեն 4 զոյգեր, որոնց մարտնչումը կը համարվի վճռական: I զոյգ—ճապոնացի Օնօ-Օկի-Տարօն՝ հայ ըմբիշ Կարա-Զամուկովի հետ: II զոյգ—կովկասեան ըմբշամարտ թիւրքական ըմբիշ Հակկը-Սուլէյմանի և Բրզնօշվիլիի միջև: III զոյգ—կովկասեան ըմբշամարտ Իոսիֆ Ցերաձէի և պոլտավացի ըմբիշ Ցաբենկոյի միջև: IV զոյգ—ֆրանսիական ըմբշամարտի Ի. Բօգօշվիլիի և Կուրլենդիայի ըմբիշ Կորշի միջև:
685. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

ՄԵԿՆԵԼՈՎ ՔԱՂԱՔԻՑ, հիւանդների ընդունելութիւնը դադարեցրել է մինչև օգոստոսի 20-ը:
(օ. մ.) ատ. 669. 3—2

ԴՈԿՏՈՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ

Ասիստենտ Բեռլինի համալսարանի Charité հիւանդանոցի

Շարունակում է ընդունել Գերմանիա գնացող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ:

Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) ատ. 391. 100—31

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻՑ

(Հեռագրով)

—

Էջմիածին, 6 յուլիսի*)

Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջնորդութեան համաձայն Կովկասի փոխարքան թոյլատրել է բանալ հանգանակութիւն ի յիշատակ Լազարեան ճեմարանի հիմնադիրների՝ բանալու համար զուգահեռական դասարաններ, ուր պէտք է ընդունվեն հայ երեխաներ Պարսկաստանից և Թիւրքիայից:

Երէկ, ամսիս 5-ին, Թիֆլիսից եկան Էջմիածին դոկտոր Ն. Տաղաւարեան և Հ. Առաքելեան և ներկայացան Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Առաջինը, իբրև պատուիրակ Պօղոս փաշա Նուպարի և Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան ներկայացրեց Վեհին Նուպար փաշայի գրութիւնը, որով խնդրում էր օժանդակել Միութեան ճիւղերի բացման: Երկրորդը, իբրև պատուիրակ Կ. Պօլսի Հայոց Միացեալ Ընկերութեան, մատուցեց Վեհին բարեբար անդամի վկայագիրը: Պաշտօնական ներկայացումից յետոյ ունկնդրութիւնը տեւեց մի ժամից աւելի, որի ժամանակ խօսվեց ազգային մի քանի կարևոր հարցերի մասին: Այսօր, կիրակի, պատգամաւորները հրաւիրվեցին ճաշի Վեհափառի մօտ, որից յետոյ դարձեալ ունեցան ունկնդրութիւն մօտ մի ժամ:

—

Էջմիածին, 7 յուլիսի

Թիֆլիսից եկաւ այստեղ Էջմիածնի տաճարի վերանորոգութեան յանձնաժողովի կողմից մի մասնաժողով, բաղկացած ճարտարապետներից և նկարիչներից քննելու կատարված վերանորոգութիւնները: Վերանորոգութեան գործը բաւական առաջ է գնացել:

—

Էջմիածին, 7 յուլիսի

Ճեմարանի տեսչութեան համար իբրև կանդիդատներ նկատված են Ջիվելեկեան, Ս. Մալխասեանց, Յ. Սպէնդիարեան, Տ. Յովհաննիսեան, Տիրայր վարդապետ, սակայն դեռ ոչ ոքի վրա կանգ չէ առնված:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

7 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ժամը 2-ին Կրօնշտադի նաւահանգիստը ժամանեց ֆրանսիական էսկադրան: Դեռ ժ. 12 և 15 րոպէին Թագաւոր Կայսրը եկաւ Պետերհօֆեան զինւորական նաւահանգիստը: Հանդիպողներին ողջունելով, Թագաւոր Կայսրը ծովային նշանազգեստով և Պատուաւոր Լեգիոնի ժապաւէնով գնում էր արքայական «Ալէքսանդրիա» նաւով: Նորին Մեծութեան ուղեկցում էին մինիստրները, ֆրանսիական դեսպանը, ֆրանս. ծովային և զինւորական ատաշէն, Պարիզի ռուսական դեսպանը և այլն: Արքայանաւի վրա պատրաստված էր բարձրագոյն Նախաճաշ: Կային բազմաթիւ, ծաղկահիւսերով զարդարված նաւեր: Հեռւում երևացին նաւերի ուրուագծերը: Մօտեցաւ ֆրանսիական էսկադրան: Արձակվեցին թնդանօթներ: «Կօնստանդին» նաւից պատասխանեցին նոյն կերպով: Նաւերը մօտեցան իրար և խարիսխ ձգեցին: Սկսվեցին ողջոյններ երկու կողմից: Նորից նոր արձակվեցին թնդանօթներ: Այդ զարկերի տակ Թագաւոր Կայսրը և մեծ հիւրը տեսակցեցին իրար հետ: Տեսակցութիւնը կրում էր սրտագին բնաւորութիւն: Նուագվեցին ռուսական հիմնը և ֆրանսիական մարսիլէզը: Տեսակցութիւնից յետոյ Թագաւոր Կայսրը և պրեզիդենտը գնացին Պետերհօֆեան Մեծ Պալատը: Ճանապարհի երկու կողմը խռնված էր ահագին բազմութիւն: Թագաւոր Կայսրը բարեհաճեց մեծ հիւրին ուղեկցել նրա համար պատրաստված բնակարանը: Փոքր ժամանակից յետոյ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին Օգոստափառ Աղջիկների ներկայութեամբ Մեծ Պալատում ընդունեցին պրեզիդենտին: Այդ ընդունելութիւնից յետոյ պրեզիդենտը առտոմոբիլով այցելութիւններ արեց Մեծ Իշխանների, որ ապրում են Պետերհօֆում և նրա շրջականներում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պաշտօնական Երեկոյեան ժամը 7½-ին, Պետերհօֆեան Մեծ Պալատում կայացած հանդիսաւոր ճաշի ժամանակ Թագաւոր Կայսրը արտասանեց հետեւեալ բաժակաճառը.

Պարոն պրեզիդենտ, թոյլ տուէք Ինձ ասելու ձեզ, թէ որքան ուրախ եմ Ես դիմելու ձեզ այս խօսքերով «բարի գալուստ»: Բարեկամ և միացեալ պետութեան պետը միշտ կարող է հաւաստի լինել, որ Ռուսաստանում ամենաջերմ ընդունելութիւն կը գտնի. բայց այսօր, ֆրանսիական հասարակապետութեան պրեզիդենտին ողջունելու հնարաւորութիւնը խորանում է նրանով, որ յանձինս ձեր Մենք հանդիպում ենք հին ծանօթի, որի հետ Ես երկու տարի առաջ հաճոյք ունեցայ անձնական յարաբերութիւններ կապելու, որ վաղուց միացված է երկու ժողովուրդների փոխադարձ համակրութեամբ և ընդհանուր շահերով: Ֆրանսիան և Ռուսաստանը արդէն քառորդ դար է սերտ կապեր են պահպանում միևնոյն նպատակին աջողութեամբ հասնելու համար, որը կայանում է նրանում, որպէսզի պահպանեն իրանց շահերը, դրա հետ միասին նպաստելով Եւրոպայի հաւասարակշռութեան և խաղաղութեան պահպանութեան: Ես չեմ կասկածում, որ, հաւատարիմ մնալով Իմ խաղաղասիրական իդէալին և յենվելով Իմ փորձված դաշնակցութեան վրա, ինչպէս և բարեկամական յարաբերութիւնների վրա, մեր երկու երկիրները պէտք է շարունակեն օգտվել խաղաղութեան բարիքներով, որ ապահովված է նրանց ոյժերով, և աւելի պէտք է ամրապնդեն նրանց կապող սերտ կապերը: Այս անկեղծ ցանկութեամբ Ես իմ բաժակը բարձրացնում եմ ձեր կենաց համար, պարոն պրեզիդենտ, որ միևնոյն է թէ Ֆրանսիայի փառքի և բարօրութեան համար:

Ֆրանսիական հասարակապետութեան պրեզիդենտը, պատասխանելով Նորին Մեծութեան, արտասանեց հետեւեալ բաժակաճառը. «Ձերդ Մեծութիւն, շնորհակալ եմ Ձեզնից ցոյց տուած ընդունելութեան համար և խնդրում եմ հաւատալ, որ ինձ շատ հաճելի էր այցելել մեր բարեկամ և դաշնակից ժողովրդի Օգոստափառ Պետին: Հաւատարիմ այն տրադիցիաներին, որոնց հետևել են իմ յարգելի նախորդները, ես կուզէի Ձերդ Մեծութեան վկայել այն զգացումները, որոնք անփոփոխ պահվում են բոլոր ֆրանսիացիների սրտերում: Մօտ 35 տարի է անցել այն օրից, երբ մեր երկու պետութիւնը, իրանց բաղդի պայծառ նախատեսութեամբ միացրին իրանց դիւանագէտների գործողութիւնը, և այդ մշտական համագործակցութեան բարի հետևանքները իւրաքանչիւր օր զգալ են տալիս իրանց աշխարհի հաւասարակշռութեան մէջ: Հիմնըված ընդհանուր շահերի վրա, լուսաւորված երկու պետութեան խաղաղասիրական ձգտումներով և յենված զօրքերի և նաւատորմիղների վրա, որոնք գիտեն և յարգում են միմեանց և սովորել են եղբայրանալ, ամրապնդված երկարատև փորձով և լրացված նշանաւոր բարեկամութեամբ, մեր միութիւնը, որի նախաձեռնութիւնը պատկանում է փառապանծ Կայսր Ալէքսանդր III-ին և պրեզիդենտ Կարնօյին, այն օրից մշտապէս իր բարեհոգի ազդեցութեան ապացոյցներն է տալիս: Ձերդ Մեծութիւնը կարող է հաւատացած լինել, որ Ֆրանսիան, ինչպէս մինչև այժմ, նոյնպէս և յետագայում, իր դաշնակցի ամենօրեայ սերտ գործակցութեամբ պէտք է աշխատի խաղաղութեան և քաղաքակրթութեան գործի վրա, որի համար երկու պետութիւնները և երկու ժողովուրդները չեն դադարի աշխատելու: Բաժակ բարձրացնելով ի պատիւ Ձերդ Մեծութեան, Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի, Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի, Նորին Կայսերական Բարձրութիւն Գահաժառանգի և Կայսերական Ընտանիքի, ես խմում եմ Ռուսաստանի մեծութեան և ծաղկման համար»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մեծ պալատում ֆրանսիական պրեզիդենտի պատուին Նոյնին Կայսերական Մեծութիւնների մօտ կայացաւ հանդիսաւոր ճաշկերոյթ: Ճաշին հրաւիրված էին ֆրանսիական պրեզիդենտի շքախումբը, ֆրանսիական դեսպանը, դեսպանութեան պաշտօնեաները ամուսիններով, մինիստրները, ֆրանսիական էսկադրայի պետը: Սեղանի կենտրոնում նստած էր Թագուհի Կայսրուհին, ձախ կողմը Թագաւոր Կայսրը, աջ՝ Պուանկարէն: Այնուհետև կարգով նստած էին Մեծ Իշխանները, մինիստրները և բարձրաստիճան անձինք և հրաւիրված հիւրերը: Թագաւոր Կայսրի ճառը ծածկվեց մարսիլէզի հնչիւններով, որ լսվեց յոտնկայս: Պրեզիդենտի ճառից յետոյ կատարվեց ռուսական հիմնը: Ժամը 10-ին ցրվեցին հիւրերը:

ՊԱՐԻԶ.—«Թանը» «Ռուս-ֆրանսիական արծաթեայ պսակը» վերնագրով յօդուածում ասում է. «Ֆրանսիական հասարակական կարծիքը խորապէս երախտագէտ է ռուսական մամուլին այն ընդունելութեան համար, որ ցոյց են տալիս Պուանկարէին և Վիվիանիին»:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 յուլիսի

ԹԵՀՐԱՆ.—Ռուսական դեսպանը միսսիայի պաշտօնեաների և ռազմ. հիւպատոսի հետ միասին հանդիսաւոր ունկնդրութիւն ունեցաւ շահից և ներկայացրեց Թագաւոր Կայսրի ուղերձը:

Կ. ՊՕԼԻՍ.—Թալէաթ-բէյը պառլամենտում ընդարձակ մի ճառ արտասանեց, որի մէջ պարզում էր կաբինէտի արած ծառայութիւնները, որ արել է անցեալ տարի: Պալատը վստահութեան ձայն տուեց կառավարութեան: Յունական պատգամաւորները ձեռնպահ մնացին ձայնատւութիւնից: Յոյն Էմմանուէլիդիս յայտնեց, որ կառավարութիւնը յետ է մնացել իր այն սկզբունքից, որ արծարծվեց սահմանադրութիւն հաստատելու ժամանակ, այն է՝ Թիւրքիայի ժողովուրդների միութիւնը և եղբայրութիւնը: Այն միջոցները, որ ծախսվում են զինման վրա, պէտք է ուղղված լինեն երկրի զարգացման գործին: Էմմանուէլիդեսի ճառից յետոյ յոյն պատգամաւորները թողին պառլամենտը:

ԱԹԷՆՔ.—Եպիրոսի ժամանակաւոր կառավարութեան արտաքին գործերի մինիստր Կարապանոսը մի ժուռնալիստի հետ ունեցած զրոյցի ժամանակ վճռականապէս հերքեց եւրոպական լրագիրների այն տեղեկութիւնը, թէ Եպիրոսի կառավարութեան և Թիւրք ապստամբների միջև համաձայնութիւն է կայացել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Գործադուլային շարժումը ծագեց նոր ոյժով: Առաւօտից գործադուլ արին խոշոր գործարանների ու ձեռնարկութիւնների և մանր արհեստանոցների և տպարանների բանւորները: Գործադուլ են արել ընդամենը 75,000 մարդ: Փորձեր եղան ցոյցեր կազմելու, բայց ոստիկանութիւնը ցրեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Աստրախանի նահանգում ժանտախտով հիւանդանալու 49 դէպք է եղել, 46-ը՝ մահացու: Իսկ Պոդոլի երեք գաւառում խոլերայով հիւանդանալու 37 դէպք է եղել, 23-ը՝ մահացու:

Քաղաքապետը հրատարակել է մի գրութիւն, որով յայտնում է ցոյցերին մասնակցելու արգելման մասին և առաջարկում է առանց դիմադրելու կատարել ոստիկանութեան պահանջները: Անկարգութիւններին վերջ տալու համար ձեռք են առնվելու ամենածայրայեղ միջոցներ:

ԼԻԲԱՒԱ.—Այրվեցին Աւխի ատաղձագործանը և 7 հարևան տներ: Վնասները հասնում են 10,000-ի:

ՍԻՄԲԻՐՍԿ. — Այրվեցին անտառները: Վնասները ահագին են:

ԷՍԵՆՏՈՒԿԻ.—Ժամանեց ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը:

ՌԵՎԵԼ.—Գործադուլ են արել նաւահանգստի ծառայողները, որոնք պահանջում են վարձի յաւելում: Նաւերը դատարկելու գործը կանգ է առել:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ.—Այսօր բացվում է դանիական ռիկսդագի արտակարգ նիստը:

ՊՕՐՏՍՄՈՒՏ.—Թագաւորը դիտեց նաւատորմիղը:

ԶԱԼՑԲԵՐԳ. — Ռադգաուզեբերգեան ոսկու հանքերում գազի պայթումից մահացան 11 բանւոր:

---

*) Ստացված է ուշ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ

Տասը տարուց աւելի է ինչ հայ ժողովրդական թատրոնական գործը ծնունդ առնելով Աւճալեան և Մուրաշկովի թատրոններում՝ կերպարանափոխվելով մի քանի ձևերի այսօր հասել է Զուբալովի անուան Ժողովրդական Տանը, ուր պարբերական ու կանոնաւոր կերպով, մատչելի գներով, հայերէն լեզուով ներկայացումներ է տալիս, և տասը տարի առաջ սկիզբն առած այդ մանուկ գործը այնքան հասունացել—ուռճացել է, որ ունի մինչև 8000 ր. նախահաշիւ, տարէնը տալիս է 40—50 ներկայացում, բռնում է Թիֆլիսի հայկական աչքի ընկնող հիմնարկութիւնների մէջ նշանաւոր տեղ։

Մի տարի առաջ էր, որ այդ ընկերութիւնն ունեցաւ իր նոր կանոնադրութիւնը, գործեց 1913/14 սեզոնին այդ կանոնադրութեամբ, և այժմ լրացնելով իր մի տարեշրջանը, այսօր՝ յուլիսի 9-ին հաշիւ ու համար է տալու ընդհ. ժողովին։

Նա, ով մօտիկ կանգնած է եղել հայկական այդ տակաւին պատանի ընկերութեան, նա կասէ, որ այդ ընկերութիւնը իր վրա դրած պարտականութիւնը կատարել է բարեխղճօրէն թէ նիւթական և թէ մանաւանդ բարոյական տեսակէտից։ Այդ ընկերութիւնը իր անցեալ 1913/14 սեզոնին տուել է 40-ից աւել ներկայացում, իր մուտքերով ծածկել է ծախքերը, և, եթէ հին պարտքեր չը վճարէր, թերևս մի բան էլ շահած լինէր. 7000 րուբլով տալ 40-ից աւել ներկայացում և բաւարարել մօտ 26,000 այցելուի մի սեզոնի ընթացքում, ունենալ փորձված և առաջնակարգ ռեժիսեօրներ, ինչպէս Սևումեան, Արմէնեան, տ. Սիրանոյշ՝ դա ինքնըստինքեան արդէն ապացոյց է մի մեծ գործի։ Գալով 1913/14 թւի ռեպէրտուարին ու խաղերի որակին՝ պէտք է խոստովանել, որ շատ աւելի գերազանց էին՝ քան նախկին տարիները։

Հայկական Դրամատիկ Խմբակցութիւնը այժմ մեր ամենաէական և կարևոր ընկերութիւններից մէկն է. նա է, որ մտաւոր սնունդ և գեղարուեստական ճաշակ է տալիս հասարակ դասակարգին, նա է, որ պատրաստում է կոնտինգենտներ մեր Արտիստական թատրոնի համար, նա է, որ պատրաստում է սիրողներ ու դերասաններ հայ թատրոնի համար, մինչև իսկ նա է, որ գրողներ է տալու հայ թատերագրութեան համար, ըստ որում նոր սկսնակները հնարաւորութիւն ունենալով խիստ չափաւոր գներով, նոյնիսկ ձրի (եթէ գործադիր անդամ են) յաճախելու ներկայացումներին՝ զարգացնում իրանց միտքը, կրթում ճաշակը և ծանօթութիւն ձեռք բերում թատրոնական տեխնիկական մասի հետ։

Եթէ մեր Արտիստական թատրոնը տալիս է 5 ամսվայ ընթացքում՝ 27,000 ր. ծախսելով՝ 17—19 ներկայացում, Հայկական Դրամատիկ Խմբակցութիւնը իր 7—8000 ր. ծախքով տալիս է 40—50 ներկայացում 10 ամսում. ուրիշ խօսքով ասած՝ վերջինիս ծախքը $3^1/_2$ անգամ առաջնից քիչ է, իսկ ներկայացումների թիւը $2^1/_2$ անգամ շատ, այն էլ 5—50 կ. վճարով։

Մի խումբ թատերասէրներ, մանաւանդ խաղացողները, որ հաւաքվել են այդ գործի շուրջը և տարվայ մէջ 10 ամիս գիշեր-ցերեկ տարված այդ գործով աշխատում են նրա առաջադիմութեան համար, ամենայն իրաւամբ արժանի են շնորհակալութեան. Նրանք գրեթէ, մոռանալով կեանքի ամեն մի բաւականութիւն՝ իրանց ամբողջ հաճոյքը գտնում են այն դահլիճի մէջ, ուր ամեն երեկոյ 8—12 ժամը փորձ են անում, հայկական ժողովրդական թատրոնն են զարգացնում։

Եւ այժմ, երբ լրացել է այդ նորահաստատ ընկերութեան առաջին տարին, թեւակոխում է նա երկրորդը, կարևոր ենք համարում մի քանի խօսք ասել, թէ ի՛նչ է անելու նա յաջորդ տարում։

Հայոց թատրոն ասելով հասկանում ենք մենք հայ լեզուով ներկայացումներ հայ բեմի վրա հայ դերասաններով. այդ դեռ բաւական չէ՝ աւելի ինքնուրոյն պիէսներ, գեղարուեստօրէն բեմ հանված հայ հասարակութեան առաջ. արդ, եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն և հարկաւոր է, որ մեծ ուշադրութիւն դարձվի երեք բանի վրա, նախ պիէսի գեղարուեստական կողմի ու բովանդակութեան, երկրորդ՝ լեզուի, երրորդ՝ խաղի. դրանք երբեմն էլ իրար հետ այնպէս խիստ շաղկապված բաներ են, որ մէկն առանց միւսի կը դառնայ մի տեսակ հակառակ բան. եղել են անցեալում դէպքեր, որ բեմ են հանվել անվայել բովանդակութեամբ, առանց գեղարուեստական ճաշակի, անճոռնի հայերէնով թարգմանված պիէսներ, որ կրթված մարդու միանգամայն զայրացրել են, մանաւանդ թարգմանական լեզուն, որ կատարելապէս նահատակել են. և ինչու այդ. որովհետև ամեն մի անձեռնհաս ցանկացել է թարգմանել մի բան և խաղաղ տալ հայկական սեկցիային, առանց հասկանալու պիէսի բովանդակութեան արժանիքը, առանց իմանալու հայ լեզուն, և դրանով ոչ միայն թատերական գործը զարգացրել են՝ այլ աւելի վնասել. սակայն, այժմ, երբ ունենք ձեռնհաս մարդիկ, երբ կայ բաւականին լաւ հայկական ինքնուրոյն ռեպէրտուար, երբ կան լաւ թարգմանիչներ, և Դրամատիկ Խմբակցութիւնը հնարաւորութիւն ունի հրաւիրել պատրաստված ռեժիսեօր՝ հարկաւոր է, որ այդ երեք բանի վրա խիստ ուշադրութիւն դարձվի. իսկ այդ անելու համար հարկաւոր է, որ ապագայ վարչութիւնը կազմված լինի պատրաստված և գործը սիրող մարդկանցից։ Այս բոլորից զատ՝ ցանկալի է, որ ապագայում չը կրկնվեն այն մի շարք տեղի ունեցող անբաւականութիւններն ու տխուր գործերը, որ պատահեցին 1913/14 սեզոնին, որպիսիները այսպէս թէ այնպէս ունեցան իրանց վնասակար հետևանքները թատրոնական գործի զարգացման համար, մանաւանդ դրամական հաշիւները, որ քանի տարի է, ինչ վէճերի առիթ են. ապագայ վարչութեան պարտքը պէտք է լինի, որ եթէ ապագայում որևէ վնասակար դէպք պատահի վարչութեան կամ սիրողների մէջ՝ այդպիսին իսկոյն սաղմում սպանէ, չը թողնի մեծանալու. հասարակական գործում խաթր ու երկիւղ չը կայ. հասարակական գործը պահանջում է մաքրութիւն, աշխատանք և անաչառութիւն։

Մեն-Ցիկ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դպրոցական գործը մեզանում

Ցարսկիէ-Կոլոդցի, 2 յուլիսի

Տեղիս հայոց դպրոցը ոչ մի կոպէկ հաստատ եկամուտ չունի և պահպանվում է պատահական եկամուտներով։ Դպրոցն և եկեղեցին այնքան աղքատ են, որ չեն կարողանում պահել ոչ տիրացու և ոչ ծառայ դպրոցի համար։ Ի նկատի ունենալով այս, Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս վարչութիւնը վճռեց կառուցանել հայոց եկեղեցու ընդարձակ գաւթում խանութներ երեք աչքով։ Սրա համար հարկաւոր է փող մօտ 800 ր.։ Այս փողից 300 ր. խոստացել են փոխարինաբար տալ Սղնախի վաճառականները, որոնք արդէն կէսը—150 ր.—տուել են։ Դարձեալ այս նպատակի համար հայ վաճառականները նուիրեցին 150 ր.։

Բացի սրանից վարչութիւնը խնդրեց խորհրդին 300 ր. տալ փոխարինաբար։ Խորհուրդը յարգելով այդ խնդիրը, որոշել էր տալ գումար 300 ր. ոչ թէ փոխարինաբար, այլ եռամեայ նպաստ միանուագ։ Ցարսկիէ-Կոլոդցիի հայոց դպրոցը ստանում է տարեկան 100 ր. նպաստ խորհրդից։ Արդէն բերել են քար, կիր, աւազ։ Զօրքի հրամանատարից շինութեան թոյլտւութիւն ստանալուց յետոյ շուտով կը սկսվի շինութեան կառուցումը։ Խանութները բանուկ փողոցի վրա կը լինեն և կարող են վարձ բերել տարեկան 200—300 ր., որով և ընդմիշտ ապահովված կը լինի դպրոցը և կազատվի մուրացկանութիւնից։ Շինութեան նախաձեռնութիւնը յանձն առաւ Աբգար Լիանոզեանը։

N. N.

Մի համեստ հայուհու մահը

Գանձակ, 5 յուլիսի

Ամսիս 1-ին կնքեց իր երկրաւորը, իսկ այսօր հողին յանձնվեց հմուտ գրաբարագէտ հանգուցեալ Մկրտիչ վարժապետի ամուսին Բագի Սա. Իսահակեանի մայրիկը։

Հանգուցեալը 74 տարեկան էր. նա իր կեանքի ընթացքում իր բարի և գովելի յատկութիւններով սիրելի է եղել ոչ միայն նահապետական պատմական տուն համարված Իսահակեան հին օջախում, այլ և ծանօթ-բարեկամների շրջանում. պատմում են, որ հանգուցեալը առաքինութեան տիպար է եղել և իր ձեռքից եկած օգնութիւնը չէ խնայել կարիքաւորներից։

Գանձակի գաւառի մի քանի գիւղական եկեղեցիներում—Հաջի-շէն, Խաչակապ և այլն, որտեղ կարիք է եղել—կան հանգուցեալի նուիրած եկեղեցական զարդեր. նա պատուիրել է, որ իր կանացի արդուզարդարանքները՝ ոսկի և արծաթ՝ նուիրվեն քաղաքիս Կովալևկա կոչված արուարձանի ապագայ հայ աղօթատան եկեղեցական սրբազան անօթների վերածելու, և, ինչպէս ասացին հանգուցեալի որդիները, թերևս ուրիշ հանրօգուտ նուիրաբերութիւններ էլ կանէր, եթէ մահը յանկարծակի վրա չը հասնէր։

Հանգուցեալի որդիները ի յիշատակ իրանց մօր նուիրեցին քաղաքիս ս. Յովհաննէս աւ.-եկեղեցուն 150 ր. այն պայմանով, որ գումարը անձեռնմխելի մնայ մի որևէ բանկում, իսկ տոկոսը գործադրվի մի աղքատ աշակերտուհու համար, որպէս ուսման վարձ նոյն եկեղեցու ծխ. դպրոցում. բացի այդ գումարից՝ նրանք 160 ր. ևս նուիրել են ս. Յովհաննէս եկեղեցու դպրոցի ապագայ շինութեան։

Եկեղեցում փոխանորդ Լևոն վ. դրուատեց հանգուցեալի բարի գործերը։

Գ. ք. Թ.

Գր.-ընթերցարանի բացումը

Սուրամ, 7 յուլիսի

Կիրակի օրը, ամսիս 6-ին, նշանակված էր Կ. Հ. Բ. Ը. տեղիս վարչութեան նախաձեռնութեամբ գր.-ընթերցարանի բացումը։ Ծխ. դպրոցի դահլիճում հաւաքվել էին վարչութեան անդամներ, դպրոցի հոգաբարձութիւնը և հանդիսականներ։ Վարչութեան նախագահ Յովս. աւ. ք. Աւետեանը մաղթանքից յետոյ խօսեց, շեշտելով գր.-ընթերցարանի նշանակութիւնը առհասարակ և մանաւանդ այսպիսի խուլ ընկած անկիւնում, որպիսին է Սուրամը։ Շնորհակալութիւն յայտնեց վարչութեան անդամներին մանաւանդ աւ.-ուսուցիչ Ց. Դաւթեանցին և բոլոր այն անձանց, որոնք աջակցել էին գր.-ընթերցարանի բացմանը։ Տէր-հայրը աւարտեց խօսքը բարեմաղթելով գր.-ընթերցարանին բարգաւաճումն։ Հանդէսը վերջացաւ եր. ժ. 6-ին և ժողովուրդը ցրվեց գոհ սրտով։

Մ. Գ.

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԻՒՂԵՐԻՑ

I

Խաչէն գաւառամասի Բալլուջա գիւղը գաւառիս հարուստ գիւղն է. 200 տուն են կազմում և՝ համեմատաբար հարևան գիւղերի հետ՝ տնտեսական բարեկեցիկ վիճակի մէջ են աւելի։

Ունեն մի քարաշէն եկեղեցի՝ սեփական քահանայով։ Գիւղացիք, ինչպէս ուրիշ տեղերը, սառն են դէպի եկեղեցին և բարոյական մաքուր ճանապարհից շեղված։ Եկեղեցու առաջ ընկած հրապարակը գիւղացիների համար ծառայում է որպէս յիշոցավայր. հաւաքվում են և ասիական կլասիկ հայհոյանքների շտեմարանը բանում…

Ունեն մի քարաշէն հոյակապ ծխ. ուսումնարան, որը կառուցել է Բալլուջա գիւղացի բագուբնակ Աբ. Նասիբեանը։ Ուսումնարանը ունի չորս տարրական բաժանմունք, ուր սովորում են 70 աշ.-աշակերտուհիներ։ Դասատուները երկու ուսուցիչ են, որոնցից մէկը տարվայ կէսին տկարութիւնը պատրուակ բերելով՝ թողել-հեռացել է, որին փոխարինել է՝ գիւղը կազդուրվելու եկած մի գիմնազիստ։

Ծանօթանալով ուսումնարանական գործերին, տեսանք, որ չը նայած ուսուցիչներից մէկի անժամանակ հեռանալուն՝ ուսումնարանական գործը ընթացել է կանոնաւոր և տուել է շօշափելի արդիւնք։

Ուսումնարանի տնտեսական մասի պատկերը հետևեալն է. տարվայ բիւջէն 1000 ր. է հասնում, որը հոգացվում է հետևեալ կերպով. ուսումնարանի բարերար Աբ. Նասիբեանից նպաստ 500 ր., աշակ. թոշակադրամից 400—450 ր. և մօտ 100 ր. կամաւոր նուիրատուութիւններից։ Պէտք է ասել, որ այս տարի Աբ. Նասիբեանը՝ հակառակ իր սկզբնական խոստմանը՝ 500 ր. փոխարէն 400 ր. է միայն տուել։

Առաջիկայ ուսումն. տարում մտադրութիւն կայ հրաւիրել մի վարժուհի ևս՝ աշակերտուհիներին կար ու ձև սովորեցնելու համար. հետևաբար ուսումնարանի աւելացած բիւջէն լրացնելու համար, կանխատեսվում է սահմանել գիւղացիների վրա պրոգրեսիվ տուրք։

Գիւղի արդիւնաբերութեան գլխաւոր ճիւղը Հ. Դանիէլեանի մետաքսի գործարանն է, ուր բանում են հարիւրից աւել բանւոր-բանւորուհիներ՝ օրական 20-ից 60 կ. օրավարձով։

Անշուշտ՝ գործարանի ներքին կեանքը կարօտ է մի շարք բարեփոխութիւնների, ինչպէս, օրինակ հակասանիտարական պայմանները, 10—13 տարեկան երեխաներին 14 ժամ բանեցնելը և այլն, որոնց մասին սակայն մտածողներ չը կան։

Նոյնպէս հրէթական խնդիր է, թէ բանւոր-բանւորուհիներին և թէ առհասարակ գիւղացիներին ազատել գիւղի խանութպանների կեղեքումներից, որի համար անհրաժեշտ է կօօպերատիվ հիմունքների վրա մի սպառողական խանութ բանալ, որտեղ վաճառվէին գլխաւորապէս կենսական մթերքներ՝ ցորեն, գարի և այլն։

Ուրախալի երևոյթ է սակայն այս վերջերս գիւղացիների այն համախոսական վճիռը, որով միս վաճառելը տարեկան 70 ր. կապալով տրվում է մէկին, որի համար հասարակութեան որոշած սակագինը պարտաւորեցուցիչ պէտք է լինի։

Միտք է յղացել նոյնպէս կապալով տալ մանրուքի խանութը և մանուֆակտուրայի ապրանքը, իսկ կապալավարձը գործադրել հասարակական պէտքերի համար։

Պէտք է ասել, որ բալլուջեցիները անհաշտ, գոռոզ և չափազանց մեծամիտ բնաւորութիւն ունեն. սրանց մէջ գիւղի «աղասախկալը» և «համփաները» զուրկ են հեղինակութիւնից, իրանց խօսքը անցկացնելու կարողութիւնից. ամեն մէկը իր համար մի իշխան է, եթէ չասենք աւելին։ Այնպէս որ՝ իրանց անմիաբանութեան պատճառով՝ դժուար է իրագործել որևէ հանրօգուտ ձեռնարկութիւն։ Ճիշդ է, մենք դէմ ենք առհասարակ գիւղացիների կուրօրէն իրանց «աղասախկալներին» հետևելու բնազդին, սակայն հասարակական գործերի աջողութեան տեսակէտից անհրաժեշտ է ունենալ միաբանութիւն, հաշտ ոգի, մի բան, որ չը կայ բալլուջեցիների մէջ։

Անցնելով տնտեսական դրութեանը, պէտք է ցաւ ի սիրտ ասենք, որ այս տարի բալլուջեցիների բաղդը սևացել է. գազչափ բարձրացած արտերի կանաչները, որ խոստանում էին այս տարի միանգամայն բաւարարել իրանց տէրերին, տեղացող կարկուտին զոհ գնացին՝ հողին հաւասարվելով։ Նոյնպէս կարկուտից վնասվեցին թթի ծառերը, որից մեծ արդիւնք էր սպասվում։

Ընդհանուր վնասը հաշվում է 42,700 ր.։

Այդ մասին արդէն յայտնված է կառավարութեանը, որը՝ հաւատացած ենք՝ թէ կը բաշխէ գիւղացիների պետ. հարկերը։

II

Խաչէն գաւառամասի Բալլուջա գիւղից անցնում ենք դէպի հարաւային կողմը գտնվող՝ հարևան Խանածախ գիւղը։

Ինչպէս առհասարակ մեր խոշոր գիւղերի ճանապարհները, նոյնպէս էլ Խանածախից Բալլուջա տանող ճանապարհը անանցանելի է՝ ցեխի պատճառով. առանց չափազանցութեան կարելի է ասել, որ $^1/_2$ արշին խորութեամբ ցեխ կայ. ձիաւոր ճանապարհորդն անգամ դժուարանում է անցնել։ Ապա ուրեմն ինչ կը լինի այդ ճանապարհով շարունակ երթևեկող գիւղացիների դրութիւնը։

Խանածախ գիւղը բաղկացած է 75 ծխից, բայց աւելի քան 100 տուն են կազմում։ Գիւղի կենտրոնում վերանորոգման կարօտ եկեղեցին է երևում։ Զուրկ են դպրոցից, որից պէտք է եզրակացնել, թէ մտաւորապէս որքան ողորմելի, որքան անձուկ դրութեան մէջ են գտնվում։ Ինչպէս պատմում են, 3—4 տարի առաջ ունեցել են ծխական դպրոց, որը սակայն նիւթականի պատճառով փակվել է, մի բան՝ որ երբեք պատիւ չէ բերում 100-ից աւելի տուն կազմող մեծախոս խանածախցիներին։

Գիւղում մի-յարկանի տները մատներով կարելի է համարել. իրար ընդօրինակելով բոլորն էլ երկյարկանի տներ են շինել։ Բայց որքան անմիտ բան է երևում, երբ տեսնում ես բարձր տներ՝ առանց ներքին կահաւորութեան, առանց առաստաղի, մերկ յատակով։

Այս գիւղի մէջ անհամերաշխութիւնը, հակառակութիւնը (իրար հետ) ծայրայեղութեան է հասած։ Եւ պէտք է ասել, որ այս երևոյթը ընդհանուր է մեր գիւղերում. ամենուրեք գիւղացիների մէջ անմիաբանութիւնն ուժեղ է։ Եւ Խանածախը այդ կողմից առաջին տեղն է բռնում. կռիւ, տուր ու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՋ-ՄԱՐԴԸ

(Էսքիզ)

II

Օգոստոս ամիսն էր։ Ամառային խիստ տօթ օրին հետևեց փոթորկոտ մի մութ գիշեր։ Փչում էր ուժեղ քամի. որոտում էր երկինքը, մութ ամպերը ճեղքվում, շանթեր արձակում ու թափում յորդ անձրև։ Հսկայ քաղաքի փողոցներում ոչ ոք չէր երևում. ամենը փախել տուն էին մտել, մինչև անգամ քաղաքի ծայրամասերի գովաճ այգիներում, ուր գեղեցիկ կանայք այնքան քէֆեր էին անում, տիրում էր խորին լռութիւն։ Այդ այգիների թաւուտ ծառերը շռառացող անձրևից թրջված, կախել էին իրանց տերևախիտ ոստերը ու ջուրն ընկած մարդու պէս՝ ողբում էին։ Երբեմն անձրևի քամուց ցնցվում էին նրանք, տերևների վրա լճացած անձրևի կաթիլները թափում թեթևանում, գլուխները վեր քաշում, բայց քամին դադարելուց յետոյ՝ անձրևից նորից ծանրանում, քաշանում ու համբերութեամբ տանում յորդահոս հեղեղի սպիտակ խոշոր կաթիլների ուժեղ հարուածները։ Այդ այգիներից մէկի մեծ ծառուղու մէջ այդ պահին դանդաղութեամբ մի մարդ էր շարժվում դէպի այն հսկայական շինութիւնը, որ այդ այգու խորքումն էր գտնվում։

Դա ծխախոտի մեծ գործարան էր բազմաթիւ կացարաններով։

Նա թրջվել էր մինչև վերջին թելը։ Նրա ցնցոտիներն այնքան ջուր էին ծծել, որ շփում էին նրա բաց ծնկներին։ Կօշիկների պատռած մասերով ներս մտնող անձրևի ցեխոտ ջուրը ճլթճլթում էր ամեն անգամ ոտքը կոխելիս։ Նա վազում էր դէպի այդ հսկայական շինութիւնը, անձրևի տարափից շուտ ազատվելու համար։ Վերջապէս նա հասաւ հոյակապ սանդուղքներից մէկին և մի աստիճան բարձրանալով կուչ եկաւ անկեան մէջ։ Նա դողում էր. սրբելով սկսեց մզել ցնցոտիները, որ ցամաքեցնելով՝ ջրի սառնութիւնից գոնէ որոշ չափով ազատվէր։ Սաստիկ քաղցը տանջում էր նրան. ամբողջ օրը մի կտոր հաց չէր տարել բերանը։ Ձեռքը գրպանը տարաւ՝ հացի փշրանքներ որոնելու, բայց գտաւ այնտեղ հին փշրանքներից գոյացած մածուցիկ խմոր՝ գրպանի յատակում հաւաքված։ Իսկոյն հանեց այդ ցեխը և կլանեց ագահութեամբ։ Ախորժակն էլ աւելի գրգռվեց և սկսեց բերանից ջուր հոսել։ Նորից ձեռքը գրպանը տարաւ՝ դարձեալ մի բան գտնելու յոյսով, բայց ոչինչ չը գտաւ։

Այդ միջոցին դիմացի հսկայ շինութեան գեղեցկակերտ դռներից մէկը բացվեց ու դուրս եկաւ սպիտակ գոգնոցը կապած խոհարարը։ Նա մի ձեռքին բռնել էր կերակրով լի մի մեծ ափսէ, իսկ միւսում՝ մոմ։ Նա զգուշութեամբ ներքև իջաւ, մօտեցաւ այդ հոյակապ շինութեան կողքին կպած փոքրիկ տնակին, դուռը բացեց ու կանչեց.

— Բարբոս, ահա քո բաժինը։

Նախ լսեց նա շղթայի զնգզնգոց ու շան կլանչոց, ապա Բարբոսի լափոցը։ Նա ախորժակով ուտում էր։

Սանդուղքի վրա կուչ եկածի բերնից հոսող ջուրը՝ յորդացաւ.

— Երանի աղայի շունը լինէի,—հառաչեց նա։

Նրա հառաչանքը խորն էր և ուժեղ։

Շունն սկսեց սաստիկ հաչել. նա հասկացել էր անծանօթի ներկայութիւնը։ Խոհարարը լարեց ուշադրութիւնը։

— Ո՞վ ես դու,—ձայն տուաւ նա, երբ տեսաւ, որ շունն աշխատում էր շղթան կտրել, յարձակվել այն կողմը, որ կողմից լսվեց հառաչանքն ու տնքանքը։

— Ի սէր Աստուծոյ… խղճացէք ինձ,—շշնջաց նա իր անկիւնից։

Խոհարարը մնաց ապշած։

— Գիշերվայ այս ժամին ինչպէս համարձակվեցիր ներս գալ այստեղ. ինչ է անունդ։

— Թափառական Օվէ։

— Շունն իսկոյն բաց կը թողնեմ, և նա ցոյց կը տայ քո թափառականութիւնը։

— Երանի շունը ինձ ուտէր,—մղկտաց Օվէն։—Աղա, խղճացէք, ես գող չեմ։

Խոհարարը, կասկածելով թէ գուցէ դարձեալ գողեր են եկել անցեալ տարվայ նման, որ գրասենեակում գտնվող դրամարկղը կոտրեն ու փողերը տանեն, շունն ազատեց իսկոյն շղթայից, իսկ ինքը ներս վազեց ծառաներին յայտնելու։

Բարբոսը բաժինը կիսատ թողած յարձակվեց Օվէի վրա։

Օվէն տեսաւ հսկայ գամփռին։ Նրա խոշոր աչքերը մթութեան մէջ վառվում էին ինչպէս մի զոյգ ճրագներ։

Ազատվելու ոչ մի յոյս չը կար. առանց ճիչ արձակելու պառկեց շան առաջ։

Գամփռը սանդուղքին հասնելուց յետոյ՝ մի ոստումն արեց և ուժեղ թաթերը դրեց նրա կրծքին։ Օվէի դրութիւնը սոսկալի էր։ Բարբոսը նախ նայեց ընկածի դէմքին, վճռեց նրա մերկ ուսը բռնել, բայց երբ նկատեց զոհի աղերսող աչքերը՝ իսկոյն բրդոտ դունչը հետ քաշեց ու մնաց արձանացած։

— Բարբոս, ինչու ես սպասում. ծուատիր և ազատիր այս զզուելի կեանքից.—Մրմնջաց Օվէն ընկած տեղից։

Շունը մռմռալով յետ կանգնեց ու սկսեց պոչը շարժել։

Այդ միջոցին վրա հասան ծառաներն ու մնացին ապշած՝ Բարբոսի վրա, որ մինչև այժմ նրան չէր պատահել։

Երբ Օվէն վերջացրեց իր վշտոտ կեանքի պատմութիւնը, նրան շան սրահը տարան։

— Այլ ևս բեռներ չալակել չեմ կարողանում. մի անգամ մի ծանր բեռից փորս ծակվեց ու այդ օրից ես տանջվում եմ և ապրում բակի փշրանքներով։

Ծառաները խղճալով նրան իրաւունք տուին սրահի տակ գիշերել, իսկ իրանք հեռացան։

Օվէն ցանկացաւ քնել, բայց թրջված ցնցոտիները կպչելով ու հպվելով նրա կարկամած մարմնին՝ մրսեցնում էին նրան։ Իսկոյն հանեց ու մզեց շորերը, ապա փռելով յատակի վրա սկսեց քնելու համար տեղ որոնել։ Սրահի անկիւնում նա մի մեծ արկղ տեսաւ, տաշեղներով լի։ Իսկոյն ներս մտաւ այդ արկղը, տաշեղների մէջ կծկվեց ու աշխատեց քնել։

Անձրևը դադարել էր. երկինքը պարզել։ Փայլում էր լուսինը աւելի ջինջ ու մաքուր և փոթորկից յետոյ հանգիստ առնող ծառերի լուացված կատարները շոյելով, լոյսի երցիկները սաղարթախիտ ոստերից կախում։ Օվէի քունը չէր տանում։ Երկիւղն անցնելուց յետոյ, նորից սկսեց քաղցը տանջել նրան։ Գլուխն հանեց արկղից. լսեց դարձեալ Բարբոսի լափոցը. նա շարունակում էր ուտել բաժինը։ Նրա գլխում մի տարօրինակ միտք ծագեց. գնալ Բարբոսի բունը և նրա բաժնին ընկեր դառնալ։

Դուրս սողաց արկղից և կանչեց Բարբոսին։ Շունը մօտ վազեց և սկսեց պոչը շարժել։

— Բարբոս, թոյլ տուր ընկերանալ. ես քաղցած եմ։ Մատով ցոյց տուեց նրա ափսէն, որ լուսնի լոյսից փայլում էր։

Շունը կլանչեց ու նորից վազեց բունը։

Օվէն սրտապնդվեց։ Նա համոզվեց, որ գամփռը թշնամական ոչ մի զգացմունք այլևս դէպի նա չի տածում։ Զգոյշ մօտեցաւ նրա բնի դռնակին ու նստեց ծալապատիկ։ Շունը ետ նայեց, պոչը շարժեց և դարձեալ շարունակեց ընթրիքը։ Օվէն տեսաւ ափսէի չորս կողմով թափթփված հին խոտերի մէջ մսոտ ոսկորներ ու հացի փշրանքներ։ Ձեռքը մեկնեց և վերցրեց այդ ոսկորներից մէկը և ագահութեամբ սկսեց կրծել։ Շունը դադարեց. չռած աչքերով սկսեց նայել քաղցած անծանօթին։ Օվէն մտածեց, թէ գուցէ նա պատրաստվում է յարձակվել, բայց մնաց ապշած, երբ նա մօտեցաւ նրան ու սկսեց առաջի երկու թաթերով հողը փորել։ Երկու րոպէ չանցած, հողի միջից հանեց մի մեծ հացի կտոր և սկսեց նայել Օվէին։ Օվէն հասկացաւ նրան. վերցրեց այդ հացը և ախորժակով ուտել սկսեց։ Շունը մեկնվեց նրա մօտ, դունչը դրեց երկու թաթերի վրա և սկսեց նայել նրան։ Օվէի սիրտը յուզվեց. աչքերը լցվեցին արցունքի կաթիլներով։ Նա կռացաւ և համբուրեց Բարբոսի դունչը, իսկ շունը իր հերթին սկսեց լիզել նրա ձեռքերը։

Նա կուշտ էր։ Վճռեց չը հեռանալ Բարբոսից։ Պառկեց խոտերի վրա, իսկ Բարբոսը կծկվեց նրա մէջքի մօտ։

Աբգար Փայազատ

(Վերջը միւս անգամ)

զմրոց, զազրելի հայհոյանք՝ սովորական բան է Խանածախում։

Խանածախցիների տնտեսական դրութիւնը անմխիթարական չէ. 700-ից աւել դեսեատին հող ունեն՝ արօտատեղ և վարելահող միասին։ Այնպէս որ եթէ այդչափ հողը կանոնաւոր մշակվի, միանգամայն կը բաւականացնի գիւղացիներին։ Բայց դժբաղդաբար վերջիններս չեն օգտվում նորագոյն տեսակի գիւղատնտեսական գործիքներով և իրանց տնտեսական աշխատանքները կատարում են նահապետական ձևի գործիքներով. ամբողջ գիւղում միայն 2—3 նոր ձևի գութան կայ։

Խանածախցիները ունենալով ընդարձակ այգեստեղեր՝ հնարաւորութիւն ունեն պարապելու շերամապահութեամբ, մեղուաբուծութեամբ, բանջարաբուծութեամբ և այլն։ Սակայն աւր ու տես, որ ամբողջ գիւղում գիւղատնտեսական այդ ճիւղերից ոչ մէկը գոյութիւն չունի. ճշմարտութեան դէմ չը մեղանչելու համար ասենք, որ, այո, մի քանիսը լոբի և հասարակ կանաչի են վարում։ Մարդ նոյն իսկ ամաչում է, երբ տեսնում է այդ գիւղացին շուկայում հատը 4 կոպ. վարունգ առնելիս, նոյնպէս և սեխը, ձմերուկը, սխտորը, մաշը, սոխը և այլն գնելիս։

Այդպէս և շերամապահութիւնը։ Չէ՞ որ կարելի է թթենիներ տնկել և շերամի սերմ ձեռք բերելով՝ զարկ տալ այդ ճիւղին։ Ամօթ չէ՞, որ խանածախցիների հէնց իրանց աչքերի առաջ, գիւղի մետաքսի գործարանատէրը գնում է Ջէվանշիրի Կարեագինի թուրքերից բոժոժ առնում բերում՝ թել քաշել տալիս։

Նոյնպէս և մեղուաբուծութիւնը։ Ի՞նչ մեծ բան է փեթակ պահելը, որքա՞ն զոհողութիւն է հարկաւոր դրա համար, որ Խանածախ գիւղում դարմանի համար մեղր ասած բանը չը կայ. գուցէ խնայում են դաշտային այն ծաղիկները, որոնցից հիւթ են ծծելու մեղուները։

Ահա անցնում ես այգիներով, տեսնում գիւղի յոյս ու ապաւէն թթի ծառերը կարկտահար եղած. թութ չը կայ, որ գիւղացին օղի քաշէ վաճառի՝ իր դարդին դարման անելու համար. արտերն էլ դարձեալ կարկուտը փչացրել է. էլ ինչի՞ վրա է մնում գիւղացու յոյսը, էլ ինչ եկամուտի աղբիւր կայ օգտվելու։

Բայց չէ՞ որ եթէ շերամապահութեամբ կամ մեղուաբուծութեամբ պարապելիս լինէր, գոնէ այդ երկու ճիւղերից մէկը արդիւնք կը տար։

Այս գիւղում ևս գոյութիւն ունի մետաքսի գործարան, որտեղ բաւական թւով աշխատող բանւոր-բանւորուհիներ կան։ Սրանք էլ ենթարկված են այն ռեժիմին, որպիսին գոյութիւն ունի Բալլուջա գիւղի մետաքսի գործարանում։

Ա. Ասլանեան

Խանքենդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Յուլիսի 7-ին իր ճանապարհորդութիւնից վերադարձաւ փոխարքայի քաղաքացիական մասի օգնական հօֆմէյստէր Ն. Լ. Պետերսօն։

◆ Տեղեկութիւնների համաձայն, նոր նշանակված նահանգապետ Ի. Մ. Ստրախովսկիի գալուստը Վեատկայից սպասվում է յուլիսի 11-ին։

◆ Երէկ, շահի թագադրութեան օրը, Թիֆլիսում ապրող պարսկահպատակները և արհեստաւորների համքարութիւնները թափօրով գնացին պարսկական հիւպատոսարան հիւպատոսին շնորհաւորելու շահի թագադրութիւնը։ Նոյն օրը հիւպատոսին այդ առիթով շնորհաւորեցին փոխարքայի օգնական Պետերսօն, նահանգապետի պաշտօնակատարը և քաղաքացիական ու պետական մի շարք հաստատութիւնների ներկայացուցիչներ։

◆ Քաղ. վարչութիւնը որոշել է առաջարկել տեղական արձանագործներին, որ մի ամիս ժամանակով նրանք պատրաստեն հանգուցեալ քաղաքագլուխ Ա. Ս. Մատինեանի արձանի ուրուագիծը։

◆ Յուլիսի 5-ին բժիշկ Մ. Զ. Աւթանդիլեանի 25-ամեայ բժշկական գործունէութեան առիթով Անդրկովկասի երկաթուղիների վարչութեան պատգամաւորութիւնը մի ուղերձով ու թանգագին ընծաներով և ծառայողները առանձին գրութիւններով ողջունեցին նրա յոբելեանը։ Յոբելեարը մեծ թւով ողջոյնի հեռագիրներ է ստացել։ Բժ. Մ. Զ. Աւթանդիլեանը ծառայում է երկաթուղային հիւանդանոցում։

◆ Կրուժօկի աւագների խորհուրդը քաղաքային վարչութեան հետ պայման է կապել Գօլօվինսկի պրօսպեկտի վրա գտնվող քաղաքային տունը Կրուժօկի ձմերային շէնքի համար 12 տարով վերցնելու։ Քաղաքը այդ նոր շէնքը Կրուժօկին պէտք է յանձնի 1915 թ. հոկտեմբերին։ Բացի այդ քաղաքը խոստացել է մինչև այս տարվայ հոկտեմբեր ամիսը վերականգնել շինութեան այն մասը, որը քանդվել էր մօտ անցեալում։

◆ Քաղ. վարչութիւնը որոշել է միջնորդել դումայի առաջ, որ մանկական գիւղատնտեսական աշխատանքի գաղութի համար տարեկան 60 րուբլի նպաստ յատկացվի։

◆ Մօտ ժամանակներս Թիֆլիսի դատաստանական պալատի նախագահ նշանակված սենատոր Ա. Ա. Ջերիշեվ, ինչպէս յայտնում են, նշանակվում է Պետերբուրգի դատաստանական պալատի նախագահ։

◆ Ներկայումս Թիֆլիսումն է գտնվում պետական բանկի Բագուի բաժանմունքի կառավարիչ Գ. Ն. Բօբիրեվ։

◆ Խարփուխի ակումբում յուլիսի 6-ին տեղի ունեցան ընտրութիւններ։ Փոխ-աւագներ ընտրվեցին Բաղդօյեան, Արարատեան, Կիլաձէ, Բաստեանով, Ահմեդով, Լագիձէ։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Լանդիա, Տուտբերիձէ և Շահումեան։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարի ոստիկանական երկրորդ լուրի մէջ սպրդել է հետևեալ սխալը. տպված է Բաղդասարեանը խոստովանեց իր յանցանքը։ Պէտք է լինի՝ չը խոստովանեց։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Կովկասի փոխարքան միջնորդութիւն է յարուցել, որ պետական գանձարանից բաց թողնվի 285,400 ր. Եյսկ քաղաքի րէալական դպրոցի շինութեան համար, 127,875 ր. Դերբենդի աղջկանց գիմնազիայի շինութեան և 14,970 րուբլի Պեատիգօրսկի տղայոց գիմնազիային կից մարմնամարզական դահլիճ շինելու համար։

◆ Պօստ-հեռագրական գլխաւոր վարչութիւնը թոյլատրել է Դուշէթի գաւառի Ախալգօրի գիւղում պօստ-հեռագրատան բաժանմունք բանալ առաջիկայ սեպտ. 1-ից։

◆ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրը թոյլատրել է Գ. Ի. Տէր-Սահակեան ժառանգներին նաւթային արդիւնարան բանալ Բաթումի գաւառի Բինադաղ գիւղում։

◆ Յուլիսի 3-ին Բագւում կայացաւ նաւթարդիւնաբերողների խորհրդակցութիւնը նաւթարդիւնաբերական բանւորների գործադուլի առիթով։ Խորհրդակցութեանը մասնակցում էին մօտ 60 նաւթարդիւնաբեր ու նրանց լիազօրները։ Երկար վիճաբանութիւններից յետոյ խորհրդակցութիւնը որոշեց ոչ մի զիջում չանել գործադուլաւորներին և մնալ նախկին պօզիցիայում։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Վերջին ժամանակներս Ռուսաստանում տեղի ունեցող անտառային հրդեհների առիթով անտառային դեպարտամենտը հաւաքել է մի շարք տեղեկութիւններ, որից երևում է, որ մի շաբաթվայ ընթացքում հրդեհով բռնվել և ոչնչացել են 63,000 դես. տարածութիւն բռնող անտառներ։ Վնասները խոշոր են։

◆ Պետերբուրգի կին-բանւորները ակտիվ կռիւ են սկսել բանւորների արբեցողութեան դէմ։ Շաբաթ օրերը ռոճիկներն ստանալուց յետոյ, երբ բանւորները ցրվում են դէպի գարեջրատներն ու տրակտիրները, կին-բանւորները գնում են նրանց ետևից և նրանց տրված օղին կամ գարեջուրը թափում, շշերը կոտրտում և բանւորներին ստիպում հեռանալ տրակտիրներից։ Բանւորները ենթարկվելով բանւորուհիների պահանջներին և առանց հակառակելու թողնում են օղետներն ու գարեջրատները։

◆ Հաղորդում են, որ «Гражданинъ» թերթի հրատարակիչ իշխան Մեշչերսկին հիւանդացել է թոքախտով։

◆ Վարշավայի մօտ եղած Վարշավա-Բրեստսկայա կայարանում ապրանքների մեծ խանութում երևան է հանվել ստորերկրեայ մի մեծ անցք, որը երկու մուտք ունի։ Այդ անցքի մէջտեղը գտնվել են բնակարան, սեղան, աթոռներ, ուտեստի պաշար և գողացված թանգագին իրեր—ոսկի, արծաթ և մորթիներ։ Ենթադրում են, որ այդ ներքնատունը գոյութիւն ունի մի քանի տարի, որովհետև վերջին տարիներս յաճախ անհետ կորչում էին արժէքաւոր հակեր։ Կայարանի կցապետը ձերբակալված է։ Եռանդուն քննութիւն է կատարվում։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

◆ Վրաց լրագրութեան մէջ տպվեց Մոսկվայի համալսարանի վրաց ուսանողութեան միութեան վարչութեան բաց նամակը, որ ուղղված է այն անձանց հասցէին, որոնք իրանց ուսանողութեան ժամանակ այդ համեստ միութեան դրամարկղից պարտքով փող են վերցրել, բայց զլանում են իրանց պարտքը յիշված միութեանը վերադարձնելու։ Եթէ մինչև առաջիկայ սեպտեմբերը այդ պարտքերը չը վճարվեն, ուսանողական միութեան վարչութիւնը արդարացի կերպով սպառնում է հրապարակ հանել պարտապանների ազգանունները և դիմել դատարան։

◆ Վրաց յայտնի բէլլէտրիստ և ժողովրդի դեմօկրատ դասի սրտի հարազատ թարգման Էգնատէ Նինօշվիլիի մահվան 20 տարին լրանալու առիթով Կիէվի մի խումբ ուսանողների նախաձեռնութեամբ Նինօշվիլիի անունով հիմնվում է գրական ֆոնդ, որի նպատակն է նիւթական օգնութիւն հասցնել այն գրող-բանաստեղծներին, որոնք երևան կը գան բանւոր դասակարգի շարքերից։

◆ Վրաց գիմնազիայի վերատեսուչ Ա. Վ. Մդիվանիի հեռանալու պատճառով, նրա տեղ հրաւիրվում է Դերբենդի արհեստաւորաց դպրոցի տեսուչ Ի. Տ. Լօրդկիպանիձէ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուլաւէր, 3 յուլիսի

Մոսկվայի հայ ուսանողութիւնը, ծրագրած նպատակ ունենալով հայ գրականութեան հետ միշտ կապված մնալու և մայրենի լեզուն չը մոռանալու, մեծ պահանջ է զգում հայերէն գրքերի ընթերցանութեան և ինքնուրոյնապէս զարգանալու, ուստի մամուլի միջոցով կոչ է անում հայ հեղինակներին և կարող անձանց, հրաւիրելով նրանց լուրջ ուշադրութիւնը օգնութեան գալ հայ գրքերի և պարբերականների նուիրաբերումով։

Քաղցր պարտականութիւն եմ համարում յիշեալ ուսանողութեան կողմից հրապարակապէս խորին շնորհակալութիւն յայտնել հայ գրող և ուսուցիչ պ. Գր. Բալասանեանին, որ յարգելով մեր դիմումը արձագանք տուաւ մեր կոչին՝ նուիրելով առ այժմ հայ ուսանողութեան օգտին 25 կտոր հայերէն գրքեր։

Լիայոյս ենք, որ նպատակին համակրող հայ հեղինակները չեն զլանայ իրանց օգնութիւնը հասցնել այս հասցէով՝ Москва, Коммерческій Институтъ, студенту Ерванду Баласанцъ-Акопянцу, для армянскаго студенчества.

Ի դիմաց Մոսկվայի հայ ուսանողութեան՝
Երւանդ Բալասեան-Յակոբեան

Յ. Գ.—Խնդրում ենք հայ թերթերին արտատպել։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Խմբագրութիւնս ստացաւ պոլսեցի Արամ Մուշեղեանից 5 րուբլի յօգուտ չունևոր ուսանողների։

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ

ԿԱՆԱՆՑ ՄԵԾ ՑՈՅՑԸ

—

Պարիզ, 6 յուլիսի (ն. տ.)

Հեռագիրներից իմացած կը լինէք անշուշտ, որ վերջին ամիսների ընթացքում, կնոջ իրաւունքների պաշտպանուհիներն ահ ու սարսափի թատերաբեմ էին դարձրել Լոնդոնի փողոցները։ Ֆէմինիզմն, որ նոյնպէս գոյութիւն ունի և խոր արմատներ է արձակել ֆրանսուհիների շարքում, չէր համարձակել, մինչև երէկ, դուրս գալ իր խաղաղիկ և լուռ բողոքողի դերից։ Բայց, ինչպէս երևում է, տարափոխիկ ախտերից ամենատարափոխիկն է՝ օրինակը, որից անասելի արագութեամբ վարակվում է մանաւանդ կին-արմատը։ Սրանից դեռ հազիւ երկու շաբաթ առաջ, նիհար, չոր, ոսկրոտ և ջղոտ լոնդոնուհիների յաճախ ծիծաղելի արարքներն ու քաջագործութիւնները Լոնդոնի և Պարիզի թերթերի էջերն էին լեցնում. միս և միսիս չէին վարանում, ամեն ձևի և ամեն գոյնի տակ, բողոք բարձրացնել. ամեն պարագայի, վայրի և միջավայրի մէջ ցոյց և զրոյց առաջ բերել՝ կանացի բռնաբարված իրաւունքներին սատարելու յետին նպատակով, և իրանց վրա ուշադրութիւն դարձնելու անմիջական դիտումով։ Օրինակը տրվել էր։ Շնորհալի, սիրուն և տաքարիւն ֆրանսուհիները, մանաւանդ նրբաճաշակ պարիզուհիները—որոնք աշխարհի կանացի մօդա հայթայթողներն են—վարակվեցին ուղիղ գծով Լոնդոնից եկած այդ մօդայից. և ապացուցանելու համար, թէ իրանք էլ ետ չեն մնացել իրանց լոնդոնեան քոյրերից, երէկ, կիրակի, դուրս եկան փողոց և մի ցոյց կատարեցին։

Կառավարութիւնը, որին նախագահում է՝ 20 տարուց ի վեր նշանաւոր ֆէմինիստ՝ պ. Վիվիանի, ոչ միայն որևէ դժուարութիւն չէր յարուցել այդ ցոյցը թոյլատրելու, այլ և ցուցարարուհիների տրամադրութեան տակ էր դրել քաղաքապատական մի վայր։ Տուիլըրիի այգում գտնվող ընդարձակ ջերմանոցներից մէկում, երէկ, հաւաքվել էին ուրեմն 2000-ից աւելի տիկիններ և օրիորդներ, որոնց շարքում սպրդել էին նաև մի քանի հարիւր մարդիկ և երեխաներ։ Ներկաները, երբ նախաբան ցոյցին, լսեցին չորս ճառեր՝ մէկը միւսից սիրուն, մէկը միւսից փայլուն, մէկը միւսից ճարտարահիւս։ Իրաւ է՝ թէ այդ ձևով և մտքով անմեղանչելի, զմայլեցուցիչ ճառերի հեղինակներն էին ֆրանսիական ֆէմինիզմի ամենափայլուն և համաշխարհային ֆէմինիզմի պարծանքն համարվող չորս ֆրանսուհիներ՝ տ. տ. Պօլին Ռըբուր, Մարիա Վէրօն, Մարգրիտ Դիւրան և Սէվարին. չորս տիկիններ, որոնք հռչակաւոր են ոչ միայն ֆէմինիզմի աշխարհում, այլ և մեծ գրողների և ամենամեծ բեմբասացների շարքում։ Միջանկեալ յիշեմ, որ մենք՝ հայերս՝ ազգովին երախտապարտ մնալու ենք այդ ճառախօսներից վերջինին՝ տիկին Սէվարինին, որ 1894-ից ի վեր միշտ և միշտ պաշտպանել է հայերին պարիզեան ամենամեծ թերթերի էջերում՝ իր մարգարտաշար յօդուածներով, իր ցնցող, ճմլող, փշրփշրցնող ոճով…

Ցնծանքով լիք և ոգևորված ունկնդիրներն իրանց ծափն ու օվացիան չը խնայեցին ճառախօսուհիներին, մանաւանդ որ նրանց ասածը թէ ազդեցիկ էր և թէ չափաւոր. համոզեալ՝ համոզեցուցիչ էին նրանք։ Նրանք խօսեցին մանաւանդ Կօնդօրսէի մասին, որին նուիրված էր մասնաւորապէս երէկվայ ցոյցը։ Կօնդօրսէն Ֆրանսիայի առաջին ֆէմինիստն է եղել. նա ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից մի քանի տարի առաջ գրել է՝ «Ազգային էակի, դատելու կարող եւ բարոյական գաղափարներ յղանալու յատկութեամբ չէ՞ որ մարդիկ իրաւունքներ ունեն։ Պէտք է որ կիներն էլ բացարձակապէս միևնոյն իրաւունքներն ունենան»։

Տիկին Սէվարին մի վառ պատկեր գծեց այդ յեղափոխական կեանքից, որն, երբ բարձր մտաւորական՝ մեծ մաթեմատիկոս, աւելի մեծ փիլիսոփայ և աննման գրող, ձգտեց բոլորովին անկախ մնալ կայր կուսակցականութիւնից և որը, վերջ ի վերջոյ, իր գլուխն իսկ տուեց անկախութեան ազնիւ սիրոյն համար։ Մեծարելի բեմբասացուհին, իրան յատուկ յստակ բայց հարուստ ոճով, մեզ ցոյց տուեց Կօնդօրսէին, որ մեծանում էր մաթեմատիկական գիտութիւններով—որոնք նրա մէջ արթնացնում և զարգացնում են ուղղամտութեան և արդարութեան զգացումներ (շրջապատված քնքոյշ և զարգացած էակներով—իր մայրն ու քոյրը), որոնք իրան ներշնչում են կնոջ յարգանքը։

Տիկին Սէվարինի ճառով վերջացաւ ցոյցի առաջին մասը։

⁂

Ճառախօսութիւններից առաջ, հարիւրի չափ շքեղ օրիորդներ և մանկամարդ տիկիններ—որոնց արդ ու զարդից, դասակարգութիւնից և կրթութիւնից երևում է, որ ֆէմինիզմը Ֆրանսիայում բարեկեցիկ, բուրժուա և մտաւորական դասակարգից է դուրս գալիս—բաժանեցին անթիւ անհամար մեդալներ, շղարշներ, հովահարներ, դափնիներ, ժապաւէններ, ձիթենու ոստեր և տեսակ-տեսակ յայտարարութիւններ։ Երբ տ. Սէվարինի ուղղված վերջին օվացիաները դադարեցին, բոլոր ներկաները—որոնց թիւը ճառերի ժամանակ կրկնապատկվել էր—մի ահագին թափօր կազմեցին, մի նախշուն, սիրուն, կանոնաւոր և շնորհալի թափօր՝ մի քանի դրօշներով, շատ ծաղիկներով և չափից աւելի ձիթենու ճիւղերով և դափնիներով… Երեք-չորս հազար տիկիններ, օրիորդներ և երեխաներ սիրուն ծաղկեփնջեր և ձիթենի ու դափնի ցրելով—խաղաղութեան հրեշտակներ—լուռ, անխօս, դանդաղ առաջանում էին Սէնայի եզերքից դէպի Կօնդօրսէի արձանը, որ Տուիլըրիի այգուց մօտ 1½ կիլոմետր հեռու՝ ֆրանսիական կաճառի առաջն է գտնվում, շնաքրքիջ Վօլտէրից մի քիչ ներքև։ Երբ թափօրը հասաւ արձանի մօտ, ֆրանսիական ֆէմինիզմի պետերը, տիկիններ՝ Սէվարին, Ավրիլ դը Սէնտ Կրուա, Մարգրիտ Դիւրան, Ժան Միզ, Մարիա Վէրօն, Պօլին Ռըբուր, Պիշօն-Լանդրի, Վիտ-Շլումբէրժէ և ուրիշներ՝ կանգ առան մի անկիւնում իրանց ձեռքի փնջերն ու դափնիներն արձանի ոտին դնելուց յետոյ։ Ողջ մի ժամ թափօրին մասնակցողներն իրար ետևից անցան արձանի առջևից և նրա պատուանդանին ձգեցին իրանց ծաղիկները, պսակները, դափնիներն ու ձիթենիները… շուտով 4—5 մետր բարձրութեամբ ահագին արձանը ծածկվեց, անհետացաւ ծաղիկների մէջ… Ազնուաշուք տիկիններ, փափկասուն օրիորդներ, վայելչազարդ հարսեր, անմեղ երեխաներ ծիսակատարի ջերմեռանդութեամբ բերում էին իրանց նուէրը, իրանց սրտի ձօնը այդ խորանին, որի աստուածը, սրանից 125 տարի առաջ, սեռերի հաւասարութիւնն էր քարոզել…

Բոլոր այս ցոյցը կատարվեց ամենակատարեալ կարգապահութեամբ. ոչ մի ոստիկան չը կար այնտեղ. հետաքրքիր ամբոխը, որ տասնեակ հազարներով հետևում էր ցոյցին, մեծ համակրութիւն էր յայտնում և գովում տիկինների արարքը։ Սկզբից մինչև վերջը ցոյցը տեղի ունեցաւ արդար հարցերի յատուկ հանդարտութեամբ և մի այնպիսի չափաւորութեամբ, որպիսին կարող է ներշնչել աջողութեան ապահովութիւնը։ Եւ արդէն պարլամենտի անդամների կէսը ընդունել է կանանց պահանջների արդարութիւնը. սրանք համամիտ են կանանց ընտրող և ընտրելի դառնալուն։

Թափօրին մասնակցում էին բազմաթիւ կանացի ընկերութիւններ, ընդ որս՝ Տիեզերական դաշնակցութիւն կանանց ի նըպաստ խաղաղութեան, Փրանսուհիների միութիւն՝ կանանց իրաւունքների համար, Ազգային միութիւն՝ կանանց քուէարկութեան համար, Կնոջ վիճակի բարւոքման եւ նրա իրաւունքների պահանջման ընկերութիւն, Ֆրանսիական միութիւն՝ կանանց քուէարկութեան համար, Կանանց եղբայրական միութիւն և այլն։

⁂

Ամենահին ժամանակներից ի վեր, վիճակի անհաւասարութիւնն, որ ամեն կազմակերպված ընկերութիւնների ծոցում տիրապետում է սեռերի միջև, ունեցել է իր հակառակորդներն ու հալածողները, իսկ սեռի հաւասարութեան գաղափարն ու թէզը՝ իր կուսակիցներն ու ախոյեանները։ Դրան ապացոյց՝ հին, նոր և նորագոյն գրականութիւններն ու փիլիսոփայական և ընկերաբանական զանազան վարդապետութիւնները։ Բայց պէտք է ասել, որ սեռերի հաւասարութիւն հաստատելու նպատակով՝ կանանց իրաւունքներ պահանջելը սկսել է, իրապէս, ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից ի վեր։ Այն շարժումը, որ կանացի պահանջները բերել-հասցրել է մինչև մեր օրերը, զուգընթաց հետևել է դեմօկրատական ազատագրումի բոլոր ելևէջներին. նրա բաղդակից՝ նրա հետ պլլացել, փայլել է կամ աղօտացել, շէջել, հանգել է։ Սկսած 1787-ից ֆէմինիզմը խափանվում կամ վերսկսում է ժողովրդ. ընդվզումների զսպումի կամ վերածնումի հետ։ Ունչացած՝ առաջին կայսրութեան ժամանակ, նա կենդանանում է 1830-ին և 1860-ին, երկրորդ կայսրութեան հաստատվելուն անհետանալու համար։ Երրորդ հասարակապետութեան հռչակումից՝ դեմօկրացիայի վերջնական յաղթութիւնից յետոյ նա ստանում է մի յարատև և յարաձուն ընթացք, օրէ-օր նոր հող գրաւելով։

Ֆրանսիական ֆէմինիզմը, սկսած լինելով սեռերի քաղաքացիական և քաղաքական լիակատար հաւասարութեան պահանջումով, այս վերջին քառասուն տարիների ընթացքում, երկար ժամանակ, դեգերել, մի անհաստատ ընթացք է ունեցել։ Ֆէմինիզմի ջերմագոյն պաշտպանները, պրօպագանդիստները, երբ նկատեցին այն սաստիկ դիմադրութիւնն, որ ծագեց կանանց քաղաքական քուէի գաղափարի շուրջը, խոհեմութիւն համարեցին ձեռնարկել մասնակի բարենորոգումների։ Նրանք փորձեցին կնոջ վիճակը բարւոքել, աստիճանաբար, ընտանեկան կամ քաղաքական կարգերին վերաբերող բարենորոգումներով։ Այս աւելի համեստ ընթացքով, նրանք ձեռք բերեցին, թէպէտ դանդաղօրէն և մեծ դժուարութեամբ, մի քանի նշանակելի առաւելութիւններ, զգալի տեղատուութիւններ և նկատելի առաջադիմութիւններ։ Վերջապէս փորձը ցոյց տուեց նրանց, որ կանանց ի նպաստ էական և տևական ոչինչ ձեռք բերել կարելի չը պիտի լինի, մինչև որ նրանք որոշ տեղ չը գրաւեն պետական կազմի մէջ. այդ օրից ֆէմինիզմն իր ամբողջ թափով իր շարժումը, իր գործելակերպն ուղղեց և կենտրոնացրեց դէպի քաղաքական իրաւունքներ ձեռք ձգելու նպատակը։

Եւ ահա դրա համար էր, որ երէկվայ ցոյցը պահանջում էր՝

Vote pour les femmes! (կանանց համար քուէ).

Egalité des sexes! (սեռերի հաւասարութիւն)։

Պիտի կարողանա՞ն իրանց նպատակին հասնել։

Ֆրանսիական մի առած շատ լաւ պատասխանում է այդ հարցին՝

«Ce qu'une femme veut, Dieu le veut!» (Մի կնոջ ուզածն Աստուած էլ կուզէ)։

Այդ առածը չարամտութեամբ խեղաթիւրելով, աւելի զօրանում է՝

«Quand la femme veut, le Diable l'exauce!...» (Երբ կինը մի բան պահանջում է, սատանան նրան կը տայ)։

Ռ. Շահ-Մելիքեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

—

Վան, 12 յունիսի

Կարճկան գաւառում անցեալ տարի սպանվել էր քիւրդ գլխաւորներից մի ոմն հաջի Մուսա բէյ, որի առիթով իբրև ոճրագործ ամբաստանվել էին 42 հայեր, իսկ սրանցից 21-ը մօտ մի տարուց ի վեր մնում էին բանտում, իսկ մնացեալները փախստական էին։ Սրանց դատավարութիւնը տեղի ունեցաւ Վանի եղեռնադատ ատեանի առաջ և վերջացաւ ամսիս 1-ին. բանտարկեալ 21 անձինք ամբողջապէս, փախստականներից էլ 12 հոգի անպարտ յայտարարվեցին, բանտում եղողները արձակվեցին, իսկ 9 անձերի էլ ի բացակայութեան 15-ական տարի բանտարկութեան վճիռ տրվեց։ Այս վճիռն և մանաւանդ բանտարկեալների արձակումը լաւ տպաւորութիւն թողեց հայ ազգաբնակութեան վրա, որին սաստիկ ճնշում էր մի քիւրդի սպանութեան պատճառով 42 անձերի իբրև ոճրագործ ամբաստանվելու պարագան, որ հայերի դէմ հալածանքի բնոյթ էր կրում, թէև դատապարտվածներից էլ անմեղներ կան դարձեալ։

Բանտում մնում են նորից 9 կարճկանցի բանտարկեալներ, որոնցից 6-ը Կանդու գիւղում մի քիւրդ աղայի տունը վառելու և 3-ը մի ուրիշ քիւրդի սպանութեան ամբաստանութեան խնդրով։ Այս վերջին քիւրդը մի քանի տարի առաջ սպանել էր Ուռանց գիւղի տէր-Սարգիս քահանայի որդուն. իսկ սրա որդին իր հօր վրէժը լուծել էր՝ սպանելով ոճրագործ քիւրդին. այժմ վրիժառու որդին փախել է, իսկ նրա փոխարէն բանտարկվել են նրա պարագաներից երեք հոգի։ Երկու տարի առաջ էր պատահել այս դէպքը, որի ժամանակ քիւրդերը մի քանի հարիւր անձերի բազմութեամբ և աւազակ Մահմէի ղեկավարութեամբ յարձակվեցին Ուռանց գիւղի վրա, որ պաշտպանեց իրան երկու օր՝ մինչև որ Վանից ու Բիթլիսից զօրքեր հասան ու վանեցին քիւրդական գրոհը, որի միջոցին սպանվեց վաղեմի աւազակ Մահմէն։ Նրանից յետոյ կառավարութիւնը ուռանցցիներին և նրանց ոսոխ խօրօրցի քիւրդերին հաշտեցրեց, որով քիւրդերից ոչ ոք չը ձերբակալվեց. ուրեմն ինչ իմաստ ունի նրանցից երեք հայերին պահել բանտում ու նրանց մասին լսել քիւրդերի վկայութիւնը, որ ի հարկէ վստահութեան արժանի չէ կարող լինել, իբրև ոչ անաչառ վկայութիւն։

Դարձեալ բանտում մնում են Հաջի Եակուբի սպանութեան խնդրով 10—15-ական տարի բանտարկութեան դատապարտված 10-ից աւելի կարկառցիներ, նոյնչափ էլ վճռվել են ի բացակայութեան և փախստական են մնում. կան դարձեալ 100-ից աւելի ոզմեցի փախստականներ էլ, նոյն գիւղում երկու տարի առաջ պատահած հայ-քիւրդական ընդհարումների խնդրով, որոնք իրանց տներից հեռու դեգերում են գիւղից գիւղ և գլխաւորապէս քաղաքումս, իրանց տունն ու ընտանիքը մատնելով անտէրութեան ու լքման։ Կ. Պօլսի հայոց պատրիարքը, որին ծանօթ է Վասպուրականում տիրող այս աննօրմալ դրութիւնը, հայկական բարենորոգումների սկզբնաւորութեան առիթով խնդրել է կենտրօնական կառավարութիւնից ներումն շնորհել թէ բանտում և թէ փախստական եղող հայերին, որոնց թիւը 150-ից անցնում է, ու դրանով առաջ բերել երկրում խաղաղութիւն, վստահութիւն ու նօրմալ վիճակ։ Սպասում ենք։ Մարակ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍ

Առաջիկայ աշնանը, սեպտեմբերի 25-ից մինչև 29-ը (ն. տ.) Լայպցիգ քաղաքում կայանալու է ժողովրդական կրթութեան և դաստիարակութեան միջազգային IV կոնգրէսը, որին գործունեայ մասնակցութիւն է ցոյց տալու նոյնպէս Ռուսաստանը։ Քննութեան գլխաւոր առարկան լինելու է կուլտուրական երկիրների համար խիստ կարևոր ժամանակակից թեման, այն է՝ դաստիարակչական ներգործութիւն պատանիների վրա, ժողովրդական դպրոցն աւարտելուց յետոյ մինչև զինուորական ծառայութեան ժամանակամիջոցը։ Գլխաւոր զեկուցանողները լինելու են. Պրոֆ. Ստենլի Խոլլ (Վորչեստր), ֆրանսիական ժող. լուս. նախկին մինիստր Մ. Բիւիսօն, պրօֆ. Ե. Մէյման (Համբուրգ), պրօֆ. Վ. Վ. Ֆերստէր (Միւնխէն), դ.-ր Գերտրուդա Բէյմէր (Բերլին), գեներալ-ֆելդմարշալ ֆօն-դեր-Հոլտց (Բերլին)։ 6 առանձին սեկցիաներում, բացի այդ խօսելու են Գերմանիայի և արտասահմանի յայտնի տնտեսագէտները, ի միջի այլոց պրօֆ. Ա. Դառւգէ (Մոսկվայից)։ Լինելու են հետևեալ սեկցիաները. 1) գիրքը և պատանեկութիւնը, 2) դասախօսութիւններ և դասընթացքներ, ժողովրդական բարձր դըպրոցներ, «սեթլեմենտներ», 3) պլաստիկական գեղարուեստ, թանգարաններ, թատրոններ և պատանեկութիւն, 4) կինեմատօգրաֆը և պատանեկութիւնը, 5) ֆիզիկական դաստիարակութիւն, մարմնամարզութիւն, սպօրտ, 6) հոգատարութիւն չափահասների վրա, որոնք ենթարկվում են փողոցների վնասակար ազդեցութեան։

Լայպցիգ քաղաքը զբօսանքի և զուարճութեան համար զանազան միջոցներ է նախատեսել։

Կոմիտէտը հրաւիրում է այն ամենքին, որոնց համար թանգ է պատանեկութեան բարեկեցութիւնը, մասնակցութիւն ցոյց տալ այս կոնգրէսին։ Պրոսպեկտները ուղարկվում են առաջին պահանջման դէպքում աւագ քարտուղարի կողմից՝ հետևեալ հասցէով.

P. Schlager, Leipzig, Eutritzscher str. 19.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՆՈՐ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Քաղաքական ընդհանուր դրութիւնը Բալկաններում օր աւուր աւելի բարդ ու մռայլ կերպարանք է ստանում. Ճշմարտութիւնից հեռու չի լինի, եթէ ասենք, որ նոյնիսկ օսմանեան հին-ռէժիմի ամենավատ օրերում քաղաքական հորիզոնը Եւրոպական Արևելքում այնքան խառնակ, մռայլ ու սպառնալից չի եղել, որքան է ներկայումս։—Հալածանքներ յոյների դէմ Թրակիայում և Փոքր-Ասիայում, որոնց առիթով Աթէնքի կառավարութիւնը հուժկու բողոքից Թիւրք կառավարութեան այն հաճոյակատարութեան դէմ, որ նա ցոյց էր տալիս դէպի հալածանքներ մեքենայողները, և պատերազմի սպառնալիքով պահանջեց սանձահարել մութ ույժերին և վերջ դնել յունական հալածանքներին։ Ամբաստանութիւններ և բողոքներ յունական տիրապետութեան տակ բնակվող Թիւրքերի կողմից յոյների դէմ։ Հակայունական և հակասերբիական զօրեղ շարժումներ Բուլգարիայում։ Լիակատար անիշխանութիւն Ալբանիայում, ուր Եւրոպան փաստացիօրէն անկարող եղաւ եւրոպայի միապետ և եւրոպական կառավարական ռէժիմ հաստատել։ Խուլ լուրեր Սերբիայի և Չեռնոգորիայի միացման մասին, որով Սերբիան ազատ մուտք կունենայ դէպի ծովը և Ադրիականի ընդհանուր դրութիւնը միանգամայն կերպարանափոխ կը լինի։—Այս բոլորն առանձին վերցրած արդէն մի ծանր տագնապ են ստեղծել Բալկաններում և խիստ մռայլել նրա քաղաքական հորիզոնը։ Իսկ աւստրո-սերբիական լարված յարաբերութիւնները, ի հետևանս աւստրիական գահաժառանգ՝ Ֆրանց-Ֆերդինանդի և նրա ամուսին՝ Հոհենբէրգի դքսուհու սպանութեան, գալիս են աւելի ևս խառնելու Բալկաններում գոյութիւն ունեցող քաղաքական տագնապալից դրութիւնը և թերևս ծնունդ տալու մի այնպիսի կատաստրոֆի, որի առաջն առնելու համար կարիք պիտի լինի եւրոպական բոլոր մեծ պետութիւնների լուրջ միջամտութեանը և նրանց զօրութեան լուրջ մօբիլիզացիային։

Արդարև, եթէ դեռ նոր վերջացող բալկանեան երկու պատերազմները չը կարողացան մի խելացի ու հաստատուն լուծում տալ այն բոլոր ծանր պրօբլեմներին, որոնք շատ երկար տարիներից ի վեր գոյութիւն ունեն Բալկաններում և որոնց քանակը կրկնապատկվել է այսօր ու որակն աւելի խառնվել, ապա ուրեմն անակնկալ ու աներևակայելի կատաստրօֆներին է մնում հրապարակ գալ և վերջնականապէս լուծել այդ գորդեան հանգոյցը....։

Ներկայ րոպէիս աւստրօ-սերբիական լարումն է, որ տիրապետում է Բալկաններում գոյութիւն ունեցող իրերի դրութեան վրա։ Գահաժառանգ զոյգի սպանութիւնը կատարվել է Սարաէվօյում երկու աւստրիահպատակ անձնաւորութիւնների ձեռքով, որոնք սակայն դաւանանքով օրթոդօքս են և ազգով սերբ։ Բացի այդ, հաստատվել է, որ ոճրագործները որոշ ժամանակ ապրել են Բէլգրադում և յարաբերութեան մէջ են եղել պանսերբիստ շարժմանը յարողների հետ և որ Սերբիայի մայրաքաղաքումն են ձեռք բերել նրանք նախամտածված սպանութիւնը կատարելու համար անհրաժեշտ բոլոր պարագաներն ու այնտեղ են ստացել պէտք եղած բոլոր հրահանգները։ Այսքանը բաւական է, որ աւստրիական կարծիքը դատապարտէ սերբ ժողովրդին ամբողջութեամբ և նրա վրա ձգէ գահաժառանգ զոյգի սպանութեան ամբողջ պատասխանատւութիւնը, սպանութիւն, որի համար հընարաւոր բոլոր հնարագէտ բացատրութիւններն արդէն տրված են Աւստրիայում։ Որպէս թէ Սերբիան ցանկացել է այդ սպանութեամբ մէջտեղից վերացնել աւստրօ-ունգարական բանակի բարձրագոյն շէֆին այն միջոցին, երբ Ռուսաստանը զինուորական ինչ-ինչ նորանոր միջոցներ է ձեռք առնում...։ Որպէս թէ Սերբիան նպատակ է ունեցել վերջ տալու ապագայ թագաւոր-կայսեր կեանքին, որպէս զի այդպիսով միանգամից նքանայ հանգուցեալ գահաժառանգի վարած եռանդուն քաղաքականութիւնը, որը մի հաստահիմն պատնէշ էր հանդիսանում սլաւօն ազդեցութեան դիմաց...։ Որպէս թէ Սերբիան ծրագրած է եղել այդ անլուր ոճիրով զրկել Աւստրօ-Ունգարիայի միլիտարիստական կուսակցութիւնը նրա ամենաեռանդուն շէֆից և այդ միջոցով ոչնչացնել հանգուցեալ գահաժառանգի այն անհատական խոշոր ու աննկուն ազդեցութիւնը, որը շատ անգամ կարողանում էր հակակշռել մինչև իսկ Ֆրանց-Յովսէփ կայսեր կամքին, մանաւանդ վերջին տարիներս, երբ կայսրը վճռել է իր կայսրութեան վերջին օրերը առանց պատերազմի, խաղաղութեամբ անցկացնել....։

Անշուշտ այս բացատրութիւններից և ոչ մէկը տրամաբանական չէ և չի համապատասխանում կատարված սպանութեան իսկական դրդապատճառներին։ Սրանք մասամբ արտայայտութիւն են այն ապշեցուցիչ կայծակնահար ազդեցութեան, որ գործել է Սարաեվօյի տրագեդիան աւստրիացոց վրա, և մասամբ բարբաջանքներ են բղխած՝ գերմանական միլիտարիզմով յափշտակված և կեղծ նացիօնալիզմով շպարված աւստրիական բիւրօկրատիայի և պահպանողական-նացիօնալիստ տարրերի ուղեղներից. սրանք ամեն րոպէ առիթ են փնտռում իրանց միլիտարիստական - աշխարհակալական փողը հարելու. իսկ մի փոքրիկ ազգից ծագած մի խղճուկի առաջանակի մի հարուածով գործած ծանր տրագեդիան այդպիսի առիթներից ամենից գերազանցն է և անհանդուրժելին...։ Անգիտակից ամբոխն էլ դիւրութեամբ է բորբոքվում զայրոյթի և կսկծի՝ նման րոպէներում այդպիսի գրգռեցուցիչ փողահարութիւններից, թէկուզ նա քաղաքականութեան հարլեկը իր վրա կրելու լինի, ուստի և շատ էլ անսպասելի չէր, որ Աւստրո-Ունգարիայի սահմաններում ապրող սերբերը հալածանքի ու ջարդի վըտանգին ենթարկվէին, ինչպէս որ այդ կատարվեց, և ամբողջ Սերբիան պատասխանատւութեան տակ ընկնէր, ճիշդ այնպէս, ինչպէս անմահ առակախօսի գայլն է ասում գառին. «...եթէ դու չես մեղաւորը, ապա քո եղբայրն է կամ սանահայրը»։

Մինչդեռ բոլորովին այլ են Սարաեւօյի տրագեդիայի դրդապատճառները, և նրանք ոչ մի կապ չունեն ոչ միայն սերբ կառավարութեան և նրա վարած քաղաքականութեան, այլ և սերբ ժողովրդի ամբողջութեան հետ։ Ո՞ր մէկ քաղաքագէտը, լինի նա ամենաբոբիկը այդ ասպարէզում, թոյլ կը տայ իրան ենթադրելու, որ սերբ կառավարութիւնը և կամ սերբ ժողովուրդը ծրագրել է աւստրիական գահաժառանգի սպանութիւնը, որպէսզի մի մարդու ոչնչացումով, լինի նա թէկուզ երկրի պետն ու ղեկավարը, գլխիվայր շուռ տայ այդ երկրի տիրապետող դասակարգի և նրա բէյալ ույժերի քաղաքական ձգտումներն ու վարած քաղաքականութիւնը։ Ո՞ր մէկ միամիտը կարող է կարծել, որ Սերբիան այդպիսի ակտով ցանկացել է վերացնել պանսերբիզմի առաջ ծառացած աւստրիական ամուր պատնէշները։ Ճշմարիտ է, ոճրագործները աւստրիահպատակ երկու սերբ գիմնազիստներ են, երկու տաքարիւն երիտասարդ հայրենասէրներ, որոնք հազիւ թէ ինքնագիտակցաբար կատարած լինեն այդ յանդուգն ոճիրը. նրանք ամենայն հաւանականութեամբ պատկանում են Սերբիայում, գուցէ և հէնց Աւստրիայում գոյութիւն ունեցող համախոհների մի խմբակի, մի ընկերութեան կամ թերևս մի ամբողջ յեղափոխական կազմակերպութեան, մի գաղտնի օրգանիզացիայի, որի նպատակն է, դիցուք հակաաւստրիական պրօպագանդը, բայց որի միջոցները այդ նպատակին հասնելու համար անիշխանական են, յանցաւոր ու դատապարտելի։ Սակայն մէթէ մի ազգի, մի ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող յեղափոխական խմբակի կամ կազմակերպութեան արած քայլերի, այն ևս ուրիշ պետութեան մէջ արած քայլերի համար ազգակից ամբողջ ժողովուրդն է պատասխանատու և յանցաւոր։ Ամենուրէք նման խմբակներ կամ կազմակերպութիւններ ամեն ժողովրդի և ամեն պետութեան մէջ գոյութիւն ունեցել են և ունեն և նման դէպքեր շատ անգամ են պատահում, առանց որ յանցաւորների ազգակից ժողովուրդը կամ պետութիւնը անմիջական պատասխանատւութեան և հալածանքների, խուզարկութիւնների և ջարդարարութեան ենթարկվի։

Ճշմարիտ է նաև այն, որ սերբ-աւստրիական խորը անտագօնիզմը, անհաշտ թշնամութիւնը գոյութիւն ունի և գնալով աւելի է սրվում է։ Սերբիան մեծ եռանդով ձգտում է, մանաւանդ վերջին պատերազմներում ունեցած հսկայական աջողութիւններից յետոյ, իրականացնել քաղաքական ամբողջութիւնը այն բոլոր տարրերի, որոնք իրանց ծագումով պատկանում են սերբ ժողովրդին, բայց որոնք ցրված են հարևան պետութիւնների և յատկապէս Աւստրօ-Ունգարիայի մէջ։ Ցեղված մի կողմից՝ իր վերջին աջողութիւնների և միւս կողմից՝ իր սլաւօն պաշտօնակիցների վրա, Սերբիան ջանք է գործ դնում ամեն կերպ ապահովել իր զարգացման գործը։ Նա շատ է նեղվել և նեղվում է ցամաքի վրա սահմանափակ լինելուց, առանց ընդարձակ ծովի վրա մի մուտք ունենալու, մի սեղմված վիճակ, որ նրան տնտեսապէս Աւստրիայի կախման տակ է պահում։ Նա հետամուտ է շարունակ կենդանի պահել սլաւ ոգին իր հարևան պետութիւնների և գլխաւորապէս Աւստրօ-Ունգարիայի մէջ ապրող բազմաթիւ սերբերի սրտերում և անընդհատ լարված է յետ մղելու իր կենսունակութեան սպառնացող սիստեմատիկ ճնշումներն ու հալածանքները, որոնք մշտապէս բղխում են անմիջապէս հարևան երկիրներից։ Միւս կողմից աւստրօ-ունգարական իշխանութիւնը՝ առանց դէպի Արևելք մղվելու ձգտման չէ կարող հաստատուն պահել իր զօրութիւնը Եւրոպայում. Ադրիական ծովի վրա գերիշխող լինելը, մեթօդիկ կերպով առաջ խաղալը դէպի Բալկանները և ուղղակի մինչև Եգէյեան ծով հասնելը՝ որպէս վերջնական նպատակ,—սրանք այն ասպարէզներն են, որոնց շարունակ գրգռել են և պիտի գրգռեն աւստրիական եռանդոտ գործունէութեան անյագ ախորժակը։ Արդ, սլաւօն ույժերի զարգացումը, որոնք խիստ զգալի չափերի են հասնում Բալկաններում ու հէնց աւստրո-ունգարական կայսրութեան ծոցում, և ակնյայտնի ձգտումն ու եռանդոտ ջանքերը՝ ստեղծելու մի ընդարձակ Սերբիա, որի ետևը կանգնած է հսկայ Ռուսաստանը, փակում են Աւստրիայի առաջ ամեն ճանապարհ և մի անգամից խափանում նախատեսված հորիզոնը։ Սերբիան ապրել ու մեծանալ է ուզում, իսկ Աւստրիան չէ ցանկանում հրաժարվել եւրոպական մեծ պետութիւն լինելուց. ահա թէ ինչումն է կայանում աւստրո-սերբիական ամբողջ անտագոնիզմը։ Վաղ թէ ուշ, այդ անտագօնիզմը ուժգին բաղխումով մի անխուսափելի կոնֆլիկտ պիտի առաջ բերէ, կոնֆլիկտ, որի առաջը ոչ մի դիպլօմատիական բանաձև չը պիտի կարողանայ առնել։ Իրերի այսպիսի դրութիւնը բնականաբար պիտի ստեղծէր Սերբիայում և այլուր սերբ ժողովրդի մէջ հակաաւստրիական տարրեր, աւստրիատեաց էլեմենտներ, որոնցից մէկի կամ մի քանիսի տաքարիւն ու անխոհեմ տեմպերամենտը պիտի հասնէր մինչև Սարաէվօյի տրագեդիան, անկախ ընդհանուրի հոգեբանութիւնից, դուրս ընդհանուրի մտածելակերպից ու գործելակերպից։ Սակայն սերբ կառավարութիւնն ու սերբ ժողովուրդը իր աւստրիատեաց տարրերի հետ միասին խորապէս համոզված է, որ Պրինցիպների ոճրագործ գնդակներն ու Սարաեվօների անհատական տրագեդիաները չեն, որ պիտի լուծեն աւստրո-սերբիական և ընդհանրապէս աւստրո-բալկանեան ծանրակշիռ հարցը։

Եթէ Պրինցիպի ոճրագործ գնդակը չը պիտի կարողանայ իրերի դրութիւնը դէպի լաւը փոխել, ապա նա, ընդհակառակը, պիտի սոսկալի խորացնէ այն առեղծուածի վիհը, որ երկար տարիներից ի վեր գոյութիւն ունի Աւստրիայի ու Սերբիայի միջև, և պիտի կրկնապատկէ նրանց միջև տիրող անտագոնիզմի սաստկութիւնը. աւստրիացոց՝ ընդհանուր սերբ ժողովրդին արած ծանր մեղադրանքները, անզուսպ հալածանքներն ու ջարդերը մի կողմից և երկգլխանի պետութեան՝ Սերբիայում թոյլ տուած ոտնձգութիւնները միւս կողմից՝ անհերքելի ապացոյց են մեր ասածներին։

Եւ եթէ մինչև անգամ ներկայ աւստրո-սերբիական կօֆլիկտը խաղաղ ճանապարհով հարթվի և Աւստրիան իրան զսպել կարողանալով՝ աւանտիւրների չը դիմէ, վաղեմի ընդհանուր վտանգը ոչնչով չի փոխվի և ապագան կը մնայ միշտ ծանր ու սպառնալից, նրա հորիզոնը միշտ մռայլ ու փոթորկալից։ Ա. Ձ.

Ժընէվ

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—12 ժ. 8 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 2 ժ. 11 ր., Գանձակ 4 ժ. 23 ր., Եւլախ 5 ժ. 43 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 56 ր. եր., Բագու 11 ժ. 50 ր. գիշ.։ **Պօստատար գնացքը** № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 7 ր. առ., Եւլախ 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 40 ր. առ., Բագու 3 ժ. 22 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 49 ր. եր., Գանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Եւլախ 1 ժ. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 12—4 ժ. 5 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 6 ժ. 48 ր. եր., Գանձակ 9 ժ. 32 ր., Եւլախ 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 33 ր., Բագու 7 ժ. 25 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22— 4 ժ. 58 ր. առ., հասնում է Աղստաֆա 9 ժ. 46 ր. առ., Գանձակ 2 ժ. 15 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 58 ր. ցեր.։ Հաջի-Կաբուլ 11 ժ. 34 ր. գիշ., Բագու 5 ժ. 4 ր. առ..

ԲԱԹՈՒՄ.—**Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 59 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—2 ժամ 18 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլովօ 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.։ **Խառն գնացքը** № 21 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 9 ժ. 3 ր. առաւ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլովօ 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստատար գնացքը** № 4/3—12 ժ. 56 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 24/25 (IV կարգի վագոններով)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 4 ժ. 18 ր. առ., Ալագեօզ 10 ժ. 8 ր. ցեր., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցեր., Նախիջևան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 17/18—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երևան 11 ժ. 42 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 14|13—11 ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալէքսանդրօպօլ 9 ժ. 41 ր. ցեր., Կարս 1 ժ. 8 ր. ցեր.։

ԲՈՐԺՕՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 5 ր. առ., Բօրժօմ 12 ժ. 48 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 20 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 51 ր. ցեր., Բօրժօմ 8 ժ. 26 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—7 ժ. 41 ր. եր. **Պօստատար գնացքը** № 3—8 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—1 ժ. 42 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ։ **Մարդատար գնացքը** № 11—10 ժ. 5 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4—9 ժ. 30 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 55 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—9 ժ. 51 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—3 ժ. 55 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 6—11 ժ. 8 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 21 ր. եր.։ **Խառն գնացքը** № 26/27 (IV կարգի վագօններով)—4 ժ. 41 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 18 17—8 ժ. 28 ր. առ.։ **Մարդատար** (Կարսից) **գնացքը** № 16|15—6 ժ. 58 ր. առ.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—10 ժ. 28 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 25 ր. առ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ
◆ ԳԻՆԻ ◆

[illegible]

ՃԱԲԼԻ

Սեղանի 1913 թ.
Դէկկատ. 1912 թ.
Էկստրա 1911 թ.
Կորդիալ 1910 թ.

680. 100—3

Թիֆլիս, Լորիս-Մելիքովսկայա, № 22.
Տէլէֆօն № 17—48.

Մամուլի տակն է

Քամալեանց Ս. դպրի

կազմած «ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔ» դասագիրքը, Ե. տարի. Թոյլատրած Վեհափառի դիւանից։ Մինչև օրս նրա յօրինած կրօնի միւս գրքերը՝ Ա. տարի 10 կ., Բ. տարի 20 կ., Գ. տարի 30 կ. Դ. տարի («Մարգարէներ») 40 կ., վաճառվում են Թիֆլիսի գրախանութներում 20% զեղչով։

(Հ. Շ.) 675. 5—2

Մի հայ ուսանող

պատմ.-լեզուակ. մասնաճիւղի, որոնում է դասեր. մասնագիտօրէն—լեզուներ, մաթեմատիկա։ Հասցէ՝ «Մշակի» գրասենեակ։

673. 3—3

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպ. Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված Դպրոցում առաջիկայ 1914/15 ուս. տարվայ համար ազատ տեղեր կան բոլոր դասարաններում, սկսած Գ. պատրաստականից մինչև վերին դասարան (բացի III և VI դասարաններից)։

Ընդունվող աշակերտների տարիքը պիտի լինի՝ Գ. պատ. 9—12, I դաս. 10—13, II դաս. 11—14, IV դաս. 13—16, V դաս. 14—17, VII դաս. 16—20։

Խնդիրները ուսման, ծննդեան (իսկական) և ծաղկի վկայականների հետ ներկայացնել մինչև առաջիկայ օգոստոսի 20-ը Դպրոցիս պ. Վերատեսչի անունով։

Ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 25-ից։

(25, յուլ. 4, 9, 15) 622. 5—4

Թիֆլիսի Քաղաքային Ուպրավան

սրանով յայտարարում է, որ յուլիսի 10-ին Ուպրավայի շէնքում տեղի կունենայ ՆՈՒԱԶՈՒՐԴ (торги) կապալով տալու Գօլօվինսկի պր. վրա գտնվող Շիօյեան քաղաքային տան մէջ կաղնի տախտակից պարկէտային յատակ շինելու ասֆալտի վրա, 170 քառ. սաժ. տարածութեամբ։ Նուազուրդին պիտի ներկայացնել պարկէտների նմուշները։ Յայտարարութիւնները, հանդերձ իւրաքանչիւր քառ. սաժէնի համար վճարվելիք գներով, փակ ծրարների մէջ պիտի ներկայացնել Քաղաքային Ուպրավայի Շինարարական Բաժանմունքը մինչև յուլիսի 10-ի ցեր. ժամը 12-ը։ Յայտարարութիւններին կցված պիտի լինի քաղ. կասսա մտցված մատակարարական ընդհանուր գումարի 5% գրաւականի անդորրագիրը։ Կոնդիցիաները կարելի է ամեն օր տեսնել Շինարարական Բաժանմունքի Դիւանատանը առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 2-ը։

682. 2—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՊԱԿԷ“

յայտարարում է ի գիտութիւն ճանապարհորդների և ապրանք ուղարկողների, որ Ընկերութեան շոգենաւ «ՖՐԻԺԻ» (նաւապետ Միդրէսի) մեկնում է Բաթումից Մարսէյլ, հանդիպելով Տրապիզօն, Սամսոն և Կ. Պօլիս

Հինգշաբթի, յուլիսի 17-ին (յուլիսի 30-ին ն. տ.) 1914 թ.

Տեղեկութիւնների համար խնդրում են դիմել Ընկ. Թիֆլիսի գործակալ պ. Ս. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻՆ, իր գրասենեակում, որ գտնվում է Արմենեանկի բազարում՝ Գօստինի դվոր Մանթաշեանների։ Հեռախօս № 7—21.

22. 25—16

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1)	ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրէժի, I և II հատորներ	1 ր. 50 կ.
2)	ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	40 կ.
3)	ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
4)	ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի	40 կ.
5)	ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ	15 կ.
6)	ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի	50 կ.
7)	ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.
8)	ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	40 կ.
9)	ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	40 կ.
10)	ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	35 կ.
11)	ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	15 կ.
12)	ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի	15 կ.
13)	ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ և գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	30 կ.
14)	ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ և գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	25 կ.
15)	ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուդարեանի	80 կ.
16)	ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր. 50 կ.
17)	ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլէրի, Թարգմ. Իս. Ցարութիւնեանի.	40 կ.
18)	ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Ա. Եզեկեանի.	15 կ.
19)	ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.	20 կ.
20)	ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շիւեանի	20 կ.
21)	ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շիւեանի .	25 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%.

(6) 10—10

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный